

891.99
9 - 86

ԽԱԶԻԿ ՂՈՒՏԱՎԵԱՆ



ՀԵԿԱԾՈՐԵՐ ՄՈԼԵԿՈՒՆԴ



891.99
Հ-86

ՓԱՐԵՁ

-8 NOV 2011



ՆԵԿԱՐ ԵՒ ՄՈԼԵԽԻՆԴ

891.99

9-86

77

Կ

ԽԱԶԻԿ ՂՈՒՂԱՑԵԱՆ

ՆԵԿՏԱՐ

ԵՒ

ՄՈԼԵԽԻՆԴ

(ԵՐԿՈՒՈՐԵԱԿ ՄՈԶԱՅԻՔՆԵՐ)

Գրուած 1929 - 1939

ՓԱՐԻԶ



Imp. Araxes
46, Rue Richer, Paris

5446
45

ԹՈՒՂԹ ԸՆԹԵՐՑՈՂԱՅ

Սիրտըս տոկաց..., միտքըս լարեց...,
Յուզումներըս ալի՛ք - ալի՛ք
Դըրոշմեցին իւրեանց կընիք,
Սա տողերուս երջանկատենչ...

Դատարկիչնե՛ր ցընորախու...
Զեր կենացը Հեղումն այս զուտ
Աղի ըսպունգ մ'ովկէանէն բուտ
— Հրապոյրներու Հրաւիրատումն... —

Միջոցին մէջ ձեռք մը տրուած
Զեռքիս՝ որ զայն կ'ընդունի...
Ծըլող նայուածք մ'ալ բանիմաց
Հոգիիս՝ որ Տէր չ'ունի...

Ահա այսպէս իմ Աէրն Ասուուած
Երկվայրկեանէ մը կ'երկնի...
Երկրիս վըրայ Երկնից դիմաց
կ'ըլլայ Ծառ մը գեղանի...

1942



727956

ԹՈՒՂԹ ԸՆԹԵՐՑՈՂԱՅ

Սիրտըս տոկաց..., միտքըս լարեց...,
Յուզումներըս ալի՛ք - ալի՛ք
Դրոշմեցին իւրեանց կրնիք,
Սա տողերուս երջանկատենչ...

Դատարկիչնե՛ր ցընորախօս...
Զեր կենացը Հեղումն այս զուտ
Աղի ըսպունգ մ'ովկէանէն բուստ
— Հրապոյրներու Հրաւիրատումս... —

Միջոցին մէջ ձեռք մը տրուած
Զեռքիս՝ որ զայն կ'ընդունի...
Ծըլող նայուածք մ'ալ բանիմաց
Հոգիիս՝ որ Տէր չ'ունի...

Ահա այսպէս իմ Սէրն Աստուած
Երկվայրկեանէ մը կ'երկնի...
Երկրիս վըրայ Երկնից դիմաց
կ'ըլլայ Ծառ մը գեղանի...

1942



7179-56

2

Մայիսն այսօր կ'անձրեւէ...
 Տըրտում, խոնաւ, պատանի,
 Մայիսն այսօր կ'անձրեւէ
 Ու ջուրերէն կը տարուի...

Աքաղաղներ խելայեղ
 Կը լեցընեն միջօրէն...
 Հոգիս զատարկ է ու նեղ
 Ցեխ ու ջուր է համօրէն...

3

Քալե՞՞նք մէկտեղ մինչեւ հասնիս
 Վիլադ կանաչ բաղեղազարդ,
 Ի՞նչ փոյթ թէ չես ճանչցեր զիս ցարդ,
 Տե՛ս ի՞նչ Արեւ ունիմ սըրտիս...

Ճամբան երկար չէ, շատ գիտեմ,
 Հինգ վայրկեանէն տունդ ենք հարկաւ,
 Բայց թէ հեղ մը հետըդ քալեմ,
 Պիտ' չըմոռնամ ալ Քեղ բընաւ...

4

Եթէ տաղ մը բաղադրեցիր,
 Բզձանքներուն շիճուկէն,
 Բե՛ր այդ հեղուկն խմացական
 Որ Բըջիջներս խորըմպեն...

Մի թերանար, իսկոյն հասի՛ր,
 Ժամադրութեան չըկայ. հարկ,
 Բզբաղումներս երկրորդական,
 Սիրոյս Բաժակն է դատարկ...

5

Mannequin ի պէս, գեղեցիկ մըն էր...
 Տիպար անթերի, սէրերով բերրի,
 Դեռ անչափահաս, ծաւի՛, ոսկեհե՛ր,
 Հազի՛ւ բոլորած տասն եւ եօթ տարի...

Բայց մի՛ զարմանաք, Mannequinի պէս,
 Նոր զարդերուն հետ այլակերպեցաւ
 Եւ հեղ մը միայն ջուր խըմած ափէս,
 Հըլու զառնուկը խըրտուիլակ դարձաւ...

6

Բո՛զ գեղանի, անչափա՛հաս Գեղարուեստ
 Պատկերիդ դէմ, ո՛չ ոք կրցաւ դուռ փակել,
 Քեզ ցանկացին, վարպետ, աշկերտ ու կըդեր
 Ու ծայրայեղ մենամոլներն անդրադէտ...

Դո՛ւն Գերութի՛ւն, Ազատութեան անըսպառ...
 Անպատըսպառ Եկեղեցի Հոյակապ...
 Ինկանք ամէնքս գգուանքներուդ խորվիրապ...
 Որբ ու իշխան դարձանք Քեզմով հաւասար...

7

Զըդըրեցիր, խո՛րթ մընացիր,
 Ու ես գիւղէն քաղաք դարձիս,
 Լո՛ւռ քակեցի երի՛զ - երի՛զ
 Հիւսքն այն՝ զոր դուն չաւարտեցիր...

Գուցէ՛ օր մը փնտռես ու գաս...
 Թելերն ամէն, դեռ կը պահեն
 Հետքն Անուրջին ոսկեմետաքս,
 Որ իրենցմով հիւսես նորէն...

8

Այստեղ, այնտեղ, քիչ մամէն տեղ...
 Սիրածներուս դէմքերն աղուո՞ր,
 Յաւէրժութեանց մէջ համաստեղ,
 Ինձ կը շողան արտասովոր...

Ու ես կըզգամ որ չեմ կըրնար
 Մէկուն սէրը փոխ տալ միւսին,
 Չի ամէնքն ալ, գաղտ աննըշմա՞ր
 Դեռ կը յուշեն մեղրալուսին...

1929

9

Ի՞նչ աւերող հըրդեհ է այս...
 Բոցե՞ր կանաչ, բոցե՞ր կապոյտ
 Կը ճարակեն սիրտըս նոխազ,
 Լոյս աչերէդ աներեւոյթ...

Մարմինս անզօր — Հնոց ահեղ —
 Կը ճարճատի՞ր լո՞ւռ, աննըշմա՞ր...
 Կը տապալին Սիրոյս չըքեղ
 Խոյակները կամար — կամար...

10

Երդուընցուցի՛... Խոստացա՛ւ...
 Բայց կասկածը կը սոնքայ
 Ու նախ քան որ ուրանայ,
 Քաւէ՛ Արուեստ զիս տակա՛ւ...

Ինձ կը թուի ահաւոր
 Պարապն իրեն Խոստումին
 Ու թէ Երկինք չըկամին,
 Բուժէ հոգիս թունաւոր...

11

Տունըդ վերջի՛ն իջեւան
 Դարաշըրջիկ քայլերուա,
 Տուաւ բո՛յր մը անկորոյս,
 Այս անըստոյդ գիշերուան...

Ու ես տակաւ վերըզգաստ,
 Տաղտուկներէս ձերբազա՛տ,
 Վերադըտայ հարազատ
 Ճանապարհն իմ բարեբաստ...

1929

12

Դէմք մը այսահար, վաղուց պըռըստած՝
Ուր ժըպիտներն իսկ, արդ կը բեկրեկին...
Երբոր դիտէ զինք, հայլիին դիմաց,
Կը վերածընին հոգերն իր մըթին...

Մո՞րթէ թէ կաշի, կ'ապշի՛ շըփոթած,
Մըոկա՛ծ, այլայլա՛ծ փուռին մէջ կեանքին...
Մանաւանդ սըրտիս հրնոցէն, առկայծ,
Սէրե՛ր ճարակող բոցերէն ներքին...

8 - 10 - 29

13

ALFORTVILLEի Մասրան շինուքեան առքիւ

Ո՛վ իմ դարաւոր, կանաչ կուենի,
Աւա՛նդ վիրաւոր, — Մատո՛ւո Հայրենի —
Յեղիդ հետ պանդուխտ, Յեղիդ պէս յաւէրժ
կը կանգնիս՝ ուր որ կը գըտնես Հայե՛ր...

Գեղջուկ որմերուդ Հաւատքին անմեռ,
Բաղեղի նըման կը մագլին սըրտե՛ր,
Նունուֆարն ես դուն, նոր զարթնող գիւղին,
Բոյրերուդ հիւթով կ'ապրի Հայ - Ոգին...

14

Տարի՛ մը վերջ դե՛ռ կը յիշէ՛ր...
Ո՛չ մէկ խօսք ցարդ իրարու հետ,
Բայց անպաճոյն իր համը այդ Սէր,
Ողբերգութիւն մ'էր դառնաղէտ...

Ինչո՞ւ չի դար ա՛յսքան ատեն...
Կ'անցնի՛ ըրփոթ, գլուխն խոնարհ...
Ա՛րդեօք նորե՞ր կը թըղթատեն,
Էջերն ոսկի չոգւոյն քընար...

15

Բարձիդ վըրայ, կողք - կողքի,
— Պատժուածնե՞ր անարդա՛ր —
Հատնինք շըթունք - շըթունքի՛
Ու մոռցուի՞նք հարի՛ւր - դար...

Սիրահարնե՞ր խելագար...
Դատարկե՞նք հոյզն այս կեանքի...
Հուսկ մարմիննիս գիւահար,
Գոհ՝ անկողնէն առկախի...

16

Թեւըս կոտրեցի՛ր, ու արդ կը սողամ...
Ճարահատ մընաց Յոյսըս դեռատի,
Աչքիս չ'երեւիր, Աշխարհն է անհամ,
Սիրոյս վարդերէն, արի՛ւն կը կաթի...

Ճամբան լեցուն են, սիրո՞ւն աղջիկներ,
Բայց ինչպէ՞ս ընեմ ու Քեզ տարտըղնեմ,
Դո՞ւն առի՛ր ինչ որ ինձ ըրին նուէր,
Ու ես արդ անզա՞րդ մութ - հոգի մըն եմ...

1929

17

Ես՝ Քու սըրտիդ մէջ, դո՛ւն ալ իմ սըրտիս՝
Աշխարհին համար, կուրցա՞նք կամաւոր...
Քայլերնիս միշտ բա՛ց, ազա՞տ քայլերնիս,
Լո՞կ կը տեսնէինք զիրա՞ր ամէն օր...

Ու գիրկն աւաղին, դիմացը ծովուն,
Ակա՞նջ կոտտայինք իրարու սըրտին,
Թէ ո՞րն աւելի կը կոտտար ուժգի՞ն...
Ի՞մըս թէ Քուկըդ, թէ՝ երկուքն ալ նոյն...

21 - 2 - 30



7179-56

18

ՎԱՀԱՆ ԹԵՐԵՆՅԱՆԻՆ

Առաքեալ երդուեա՛լ, Գեղեցիկ Բանին,
Աղբիւր մըշտահոս, ջով, կոճղ աւշառատ,
Դեռ կը դիեցնես, ուսիդ Ծիրանին,
Պապակող շրթներն երկարած վըրադ...

Ու միշտ սըտաբաց, Անծիրով արսո՛ւն,
Կը պեղես եթերն Եղեմին թաքուր,
Կը փորձես այնտեղ մեզ հաստատել բոյն...
Մեծարե՛լ, հաշիչ, Երազ ու փըրփուր...

19

Ես ցարդ չըգըտայ, անուն մը աղուո՛ր
Անուններուն մէջ, հարո՛ւտ բընութեան՝
Որ ինձի յուշէր Դէմքըդ անսովոր
Ու տա՛ր Հոգիիդ Նայուածքը բուրեա՛ն...

Ու Դուն մընացիր, ընդմի՛շտ աննըման,
Անուններուն մէջ հարո՛ւտ բընութեան՝
Ու ես ալ դարձայ, Գեղի անծանօթ,
Սիրահար Ողին, յաւիտեան կարօտ...

20

Ու այդ ծիծերդ ես նորէ՛ն,
Աժերուս մէջ պիտ' առնեմ
Ու այդ շրթներդ, ես նորէ՛ն -
Շրթներուս վրայ պիտ' քամեմ...

Ու դեռ գարուն գիշերներ,
Պիտի հըսկենք միասին...
Ծառի մը տակ եւ կամ մէր
Ճամբուն վըրայ Երազին...

21

Գիշերն անցո՞րդ էր, Լըճակի ափին...
Անտառն ամայի՛, անձրեւէն թըրջած...
Ու մինչ մէր քայլերն, մէրթ ետ, մէրթ առաջ
Կը տատանէի՛ն անըստո՞յզ... յանկարծ,

Որպէ՛ս միաձոյլ զանդուած մը քարէ
Լզգեցած Երա՛զն արձանագործին,
Մէր ծարա՛ւ շրթներն սե՛զմ ու մոլեզի՛ն
Մէկէն դաղրեցան Սէ՛ր բարբառելէ...

22

Երկու սէրեր, մէկը միւսէն գերազա՞նց
կը փայփայե՞ն Հոգիս խաչուած փոխնիփոխ...
Մին կ'արտօրայ զինք պարուրել գըրկաբա՞ց,
Մինչ կը փարի միւսն համբոյրիս սըրտադող...

Ու ես կուտա՞մ, անչա՞փ կուտամ երկուքիդ,
ինչ որ ունիմ Հոգիիս մէջ հըրեղէ՞ն,
Ես տարօրէն Հրաշքի - Աղբիւրն եմ վըճի՞տ,
Քանի՞ հոսիմ, Սէրերս այնքան կ'ողողե՞ն...

22 - 5 - 30

23

Այս գիշերին մէջ՝ ուր աստղ մը չըկայ,
Դուն ի՞նչ ընելու պիտի գաս ինծի.
Տըկար մարմինըս հազի՞ւ կը տոկայ
Ու իր հոգերով միայն կ'արածի'...

Ունի՞ս լուսաւոր ճըրագ մը ձեռիդ
Թէ լո՞յս կը հայցես հոգիէս խաւար...
Ես Մըղձաւանցն եմ, ո՞չ մէկ շող վըճիտ,
Եկո՛ւր գիշերէս եթէ չես դողար...

24

Նամակ Բարեկամիս

Strasbourg

Ունի՞ս աղուոր լուրեր Զարեհ՝
Որ սփոփէ քիչ մը հոգիս.
Ե՞րբ, արդեօք Ե՞րբ պիտի նորէն
Մըսացընենք սիկարէթնիս...

Ճերմակ մազերս շատցա՞ն, տըղա՛ս,
Խարտեաչներն ա՛լ չեն ուզեր զիս...
Մամա՛ս լոկ կը դողայ վըրաս,
Չունի՞ս սիրող բառեր, չունի՞ս...

4 - 7 - 30

25

Քընքո՛ւշ հոգին, գըգուող ձեռներ ունեցաւ՝
Որոնք մարմինն անտաշ, երկա՛ր յըղկեցին
Եւ օր մըն ալ յըղկողներէն մին կամաւ,
Զինքն ընտրեց իրեն համար իբրեւ կին...

Ո՛չ մէկ գանգատ, ո՛չ մէկ զըղջում ա՛լ ծընաւ
Իրարու դէմ, իրենց կեանքի ընթացքին...
Սէրը քըշեց միշտ ապահով իրենց նաւն
Տարիներու խութերուն դէմ բերկրագի՛ն...

30 - 7 - 30

26

Դիմագիծը՝ ամբո՞ղջ հոգիս գըրաւած,
Խըրախճանքի խարո՞յիկ մ'ըլլալ չէ՞ր դժուար...
Քանի որ ան Երջանկութեան մէջ ցընդա՞ծ
Կեանքէն խըզած պիտի ըլլար ամէն լար...

Ողջակիզո՞ւմ մը Երանեալ իր համար...
(Իր բիւր անդամ զոհաբերուած Սէրերուն)
Բոսորափայլ Հըախաղութիւն մ'հողմապա՞ր
Եւ ոչ թէ Քեզ մեծարելու խո՞ր պատւոյն...

27 - 9 - 30

27

Աթոռակիդ վըրայ բազմած
Պըզտիկ կարօս խելացի,
Տարիդ նո՞յնիսկ դեռ չաւարտա՞ծ,
Արդէն ընկեր ես ինծի...

Երեք կամ չորս վանկով լեզու,
Յօրինե՞ր ենք թըռչունի,
Ալ մեր հոգին հասկըցուելու
Համար մէկուն պէտք չունի'...

28

Քառուէն գիտակցութեան՝
Բողբոջող ծաղիկն հոգւոյս,
Ա՛ռ Քեզի կը նուիրե՛մ
Սըրտակից կի՛նդ իմ սիրոյս... .

Թէ կամիս, զո՛ւն ալ ինծի,
Վըստահիլ քուկըդ ոսկի...
Երա՛զ մը, գուցէ՛ կըրկին,
Մեր սըրտէն ներս սողոսկի՛... .

29

Աղուո՛ր, սիրո՛ւն, զուարձալի՛,
Խաղալիքս ես զուն անբաժան,
Որքա՛ն թուփս ինձ հաճելի՛,
Կը գընեմ Քեզ սուղ կամ աժան... .

Կ'ըզբօնում ես յաճա՛խ Քեզ հետ,
Բի՛ւր խաղերով բարի ու չար,
Կը գըրկե՛մ ու կը շոյեմ մերթ
Կամ կ'արձակե՛մ... թէ չես յօժար... .

Թոյլատըէ՛ որ մատչիմ, սա շըրթներուդ
անմատոյց՝
Ուր կը կայթէ գեղազուարձ, հեշտահիւթը
Գարունին,
Եւ բո՞րբ համբոյը առ համբո՞յը, սիրաբուքի
բարկ գինին,
Զերդ դոյդ տատրակ ցըմըրուր, սպառենք
կըտուց ի կըտո՞ւց...

Վարձատրութի՞ւն անբասիր, անգերադա՛ս
Բերկութիւն,
Դո՞ւն ինձ համար, ես Քեզի, երկուքս ի մի
Զօ՞ն Անդի՞ր...

Ըլլանք հաղորդ ամէնուն, մատուցուինք իբր
Օրհնութիւն...

Տիեզերաց Մեծ Սիրոյն ըլլանք Աղբի՞ւր
պարտադիր...

Որդւայս ԿԱՐՈՅԻՆ
Խր 25ամսեակին առքիւ
13 - 7 - 1933

Մանկութեանս դիմակն առած, դէմըս կեցեր
կը նայի՞ս...
Ու կը նայիմ, ես ալ Քեզի, կը դիտենք մեզ
աչք - աչքի՞...
Զերդ հայելի մէկըզմէկու, դուն ըզքեզ, մինչ
ես ալ զիս,
Ու կը ճանչնանք զիրար ա'յնպէս որ պէտք
չունինք ոչ ոքի...
Սա հոգիէս, մա՛ս մը Հոգի, մարմինէս մաս
մը մարմին,
Խրա՞ր շաղուած ծըլեր են Քեզ ամբողջակա՞ն
անթերի՞...
Իմ երազած մանչը լըրի՞ւ, Կարօն՝ որդի՞
Հայրիկին,
Եւ հայրիկը իր Կարօն իսկ... անո՞ւշ
Յանկերգը Կեանքի...

32

Որդւայս ՀԱՅԿԱԿԻՆ

Դո՛ւն ե՛րկրորդ հունձքն, իմ սերմերուն
մարդացա՛ծ...

Տասնեւերեք ամսու հազիւ, մեծցելը
մեծցեր ես արդէն,
Ու ակնապիշ ինձմէ արագ գըրկաբա՛ց
«Հայրի՛կ, հայրի՛կ» թոթովելով, կը զատես
զիս ամբոխէն...

Դո՛ւն հայրիկին, իսկ հայրիկն ալ մի՛շտ Քեզի,
Մըտածումով ու մարմինով, իրարու մէջ
անբաժա՛ն...

Պիտի հրճուի՛նք, պիտի տըխրի՛նք սիրտ -
սըրտի,
Մինչեւ այն օրն՝ ուր մեզմէ մին, բըռնի
խլուի՛ անկենդա՛ն...

33

Դասընկերոջս
ԱՇՈՏ ՃԵԶՎԵՃԵՍՆԻՆ

Ինչպէ՛ս օրիորդ այդ պատանին, դուն
խելագար դարձուցի՛ր...
Ծիծերուղ խօ՛լ գգուանքներովն հետն
անդաղար պարեցիր...
Ու գիշերն ալ կարեկցօրէ՛ն, դուստր
անքըննին բարեսիրտ,
Վըհուկ մարմնոյդ վըրայ ճապուկ զինքը
սիրովդ օժտեցի՛ր...

Անփորձ տըղան այժըմ յիմար,
մերձեցումէդ հըրարծա՛րծ,
Խանձած ոգի մ'է անձանա՛չ,
մարդկութենէ ճողովրած...
Մինչ դուն մոռցա՛ր զինքը վաղո՛ւց, որպէս
աղքատ մը՝ որուն
Սիրոյդ դանձէն առ մը չնորհած ըլլայիր
կ'գդ ողորմած...

34

— Ես խօլապա՞ր թիթեռնի՞կ,
Արբո՛ Սիրովդ երջանի՞կ
Քեզի թեւերս ու թռի՞չքս
Զերբակալէ՛, ցանցէ՞ զիս . . .

Դարանակալ շըռայլէ՞ . . .
Գըգուանքներովդ այլայլէ՞ . . .
Հատցո՞ւր երանգ ու համբո՞յր,
Ու կատարին հարսնացո՞ւր . . .

27-7-33

35

Կուրծքերնուն վրայ ծիածա՞ն — Տեսիլք
Սիրոյ Հեշտավա՞ռ
Կորընթարթ ծիր բանդագո՞ւշ, խորհըրդաչո՞ւ
Յայտնութեանց . . .
Արեւներով յաճախուա՞ծ, երանութեան
Ճանապա՞րհ . . .
Տըղաբերքի տենչերով, պարարտացա՞ծ
ու յորդա՞ծ . . .

Անըսպա՞ռ ու կենսավէ՞ժ, դաշտաններու
արգասիք,
— Ծո՞վ ալեկոծ — ծիծեր հո՞ծ, անզըսպելի՞
իգութի՞ւն
Ուր դուք շըշմա՞ծ արուներ, յաւերժօրէ՞ն
կ'ուսանիք,
Զեզ ըստեղծող իմաստին Բընազդական
Հըմտութիւնն . . .

15-8-33

36

Իցի՛ւ ճամբար միշտ երկարէ՛ր
Ու յանհունըս Դուն քալէի՛ր . . .
Հոգիս սիրով պիտ' հետեւէ՛ր,
Քեզի նոյնիսկ թո՛յլ չըտայիր . . .

Դո՛ւն առջեւէն, ես ետեւէ՛դ
Երկու ճամբորդ մըշտընջենի՛ . . .
Պիտ' քալէի՛նք մենք առ յաւէ՛տ
Զըհասնելով բերան-բերնի՛ . . .

17-8-33

37

Ճերմա՛կ ու սեւ, բի՛ւր ուլունքներ,
Երկրագունդին վիզը բոլո՛ր,
Կը հոլովի՛ն տիւն ու գիշեր
Աւարտելո՛ւ մանեակն աղուոր . . .

Յորեկն առոյդ, լոյսով արբշի՛ռ,
Ու աստղագա՞րդ կայդն ալ յըղի՞ . . .
Որոնց միջեւ կեանքն հոլ մը ժի՛ր
ինքն իր Սիրով կը գըլորի՞ . . .

22-8-33

38

Կմոջս

Ածուներէ՛ն կեանքին աղու,
Քեզ ջոկեցի՛ տուն բերի...
Կինըս եղար ու մա՛յր բարի,
Երկու առո՛յդ մանչերու...
...

Աւանդատուն արդ սէրերու,
Մեր մարմիններն ու հոգին,
Կը գուրզուրա՞ն, ինչ որ ունին
Հասարակա՞ց իրարու...
...

25-8-33

39

Հակաբեւե՛ռ զոյգ հոսանքներ սըրընթա՛ց
Մեր ակնարկներն յա՛նկարծ ըզմեզ մըսիսեցի՛ն,
Իրարու աչք, իրարու սիրտ չըմըտած,
Միջոցին մէջ զիրար ուժգի՛ն գըրկեցին...
...

Ընդհարեցա՞ն երկու իղձեր բոցարծա՛րծ...
Հըայրքն իրենց, ցայտեց եռո՛ւն զերդ ժէյզէ՛ր
Ու այլակերպ այս մերձումէն չըսթափած,
Սըրտերնուն մէջ ակընթարթ մը ծընան Սէ՛ր...
...

3-9-33

40

Արփաշըրջի՛կ արշաւներուտ ծիւրումէն
Քնարդ երբեք չէ հիւծեր
Ու կը դաշնէ՛ միշտ նոր տաղեր հըրեղէ՛ն
Հոգւոց երաշտ ու կրտսեր...

Ասպընջական այս Նուէրիդ փոխարէն,
Անժառանգներն անտարբե՛ր...
Կը հեքնե՛ն Քեզ գոեհկօրէն կը խոցե՛ն
Մինչ դուն կեանքըդ կ'ընես կե՛ր...

12-9-33

41

Պատուհանէ՛ պատուհան,
Հոգիներու ի՛նչ յուզո՛ւմ...
Ոչի՛նչ ուրիշ շահեկան
Այլ լոկ Սիրոյ համոզում...

Փեղկերն ամբողջ բացուեցա՛ն
Ցընորքներուն լուսամո՛յն...
Ու խոստացա՛ն միաձայն...
Ո՛վ անպատում բերկրութի՛ւն...

13-9-33

Թաւշամարմին սիրուն կատուիկ,
 (Զարմանազա՞ն գըգուանքներով)
 կը կըծկըտիս ծալլապատիկ,
 թեւերուս մէջ սիրախըռո՞վ...

Ու պատահի որ ակամա՞յ
 Շոյանքներս ցաւցընեն Քե՞զ...
 կը չարանա՞ս որքա՞ն ըլլայ
 Ու տեղնուտեղ զիս կը ճանկե՞ս...

10-9-33

Օ՛ր մը կուգայ ու այդ հըպա՛րտ
 Գե՞զն այտերուդ կը թառամի՛...
 Ու ցըրտահա՞ր, որպէս մի վարդ,
 Հըապոյըներըդ, կը հատցընե՞ս, մի առ մի...

Ու պատանին այն երբեմնի՝
 Որ կըսպառէ՛ր անցքիդ համար...
 կը դիտէ՛ Քեզ ու կ'ողոցմի՛,
 Իր հին վարդին, թօշնա՞ծ վարդին վըշտահա՞ր:

Տարերայի՞ն թթուոյտ փըխրուն... մարմինն
հեղուկ ու հաստատուն...
Կը վերածուի՛ օր մ'անկենդան, զինք
դաշնակող աճիւններուն...
Կեա՞նքը տարրին, տա՛րը կեանքին,
մէկըզմէկու լըրացուցի՛չ,
Ծընո՞ւնդ եւ Մահ, Մահ եւ Ծընունդ,
համակեդրոն մի շըրջադի՛ժ...

Այո՛, սակայն ի՞նչ Սկըզբունք, մեծասքանչ
ի՞րկ արարչական...
Մարդը մարդուն աչքին առաջ, չօշափելի՛
իմացակա՞ն...
Արու եւ էգ սիրակըցո՞րդ, ճարտարագործ
ի՞նչ յըղացում,
Կենդանութի՞ւն գերակատար, վերանորո՞գ
Յաւէրժութիւն...

VICTOR HUGO-ի
Ախորէ վերադարձին առքիւ

Քըսան տարի հայրենազո՞ւրկ, կեա՞նք մ'առողջ
կըզկիացած կը հիւծէր ու կըսպառէր...
Քերթուածներուն մէջ հեղելով իր ամբո՞ղջ
Վիշտն ու Ցասումն, Սէրն ու Կարօտն զոր
ունէր...

Օր մ'ալ Պղինձն Ազատութեան Շեփորին
Որոտացո՞ւց սիրտն իր խիզախ Քերթողի...
Վերապրեցա՞ւ մորմոքներէն ծերունին,
իր երբեմնի խանդերո՞վը կատաղի...

46

Իմացակա՞ն ճըբագիղ, պըլպըլացող
 Յառած աչերս ու Հոգիս, Քեզ կ'ուսանիմ
 պատրոյգին,
 Ուշ գիշեր է հըսկումի... կլանուեր եմ
 տակաւին...
 Որպէսզի դո՛ւն վերապրիս, յաւէրժօրէն
 յորձանքով,
 տաղերով...

Խաչելութիւն անվաւեր, վաւերական լոկ
 ինձմով...
 Պաշտամունքիս մեծ վըկան սո՞սկ իմ անձըս
 ապահով...
 Մինչ կը հոսի, կը հոսի՛ իմաստը դա՛շն
 իմ անիմաստ կորուստին Երջանկութեան
 ու լըրիւ...
 ի պատիւ...

47

Երեք տարի վերջ «Երկո՛ւ Տող»,
 Ո՞վ բերկրութիւն սիրամորմո՛ք...
 Ի՞նչքան համեստ ու խո՛ր սիրող
 Ես դուն Հոգիս, կա՞յ քե՛զ պէս ոք...

Ճիշտ «Երկո՛ւ Տող»... այո՛, բայց ի՞նչ
 Հըրկիզող Սէ՛ր, տըռամ անլո՛ւր...
 — Երկու Հատոր ճոխ, կուռ ու ջի՛նջ
 Սըրտիս ժայթքող յո՛րդ Կենաց Զուր... —

46

Իմացակա՞ն ճըրագիդ, պըլպըլացող
 պատրոյգին,
 Յառած աչերս ու Հոգիս, Քեզ կ'ուսանիմ
 պակաւի՞ն...
 Ուշ գիշեր է հըսկումի... կլանուեր եմ
 յորձանքով,
 Որպէսզի դուն վերապրի՞ս, յաւէրժօրէ՞ն
 տաղերով...
 Խաչելութի՞ւն անվաւեր, վաւերական լոկ
 ինձմով...
 Պաշտամունքիս մեծ վըկան սո՞սկ իմ անձըս
 ապահով...
 Մինչ կը հոսի, կը հոսի՛ իմաստը դաշն
 ու լըրի՞ւ...
 Իմ անիմաստ կորուստին Երջանկութեան
 ի պատիւ...
 47

Երեք տարի վերջ «Երկո՞ւ Տող»,
 Ո՞վ բերկութի՞ւն սիրամորմո՞ք...
 Ի՞նչքան համեստ ու խո՞ր սիրող
 Ես դուն Հոգիս, կա՞յ քե՞զ պէս ոք...
 Ճիշտ «Երկո՞ւ Տող»... այո՛, բայց ի՞նչ
 Հըրկիզող Սէ՛ր, տըռամ անլո՞ւր...
 — Երկու Հատոր ճոխ, կուռ ու ջի՞նջ
 Սըրտիս ժայթքող յո՞րդ կենաց Զուր... —

Ո՛չ մէկ ճատրակ բառերու,
Պիտ' կարենար Քեզ յուշե՛լ
Ո՛չ մէկ հին կամ նոր լեզու,
Քընարե՛լ եւս առաւե՛լ...

Քան այն զոր Դուն ես ինքնին,
Ամբողջական միո-ոսկոր...
Կենդանութիւն անքըննին,
Հովուերգութիւն դաշնաւոր...

Ամէնուն պէս կ'ընէր ինքն ալ...
Ժամը իննին շաբաթ գիշեր,
Ժամադրութեան մը կ'ըսպասէր,
Մէթը ոյին շուրջ, «Փլաս-Փիկալ...»

Աղա՛տ աղջնակ ընտանիքի...
Ազա՛տ տըղայ մը կ'որոնէր՝
Որ հըաւիրէր զինք խընջոյքի
Ու վերջն ալ տա՛ր, քիչ մ'իրեն Սէր...

Ո՛չ մէկ ճատրակ բառերու,
Պիտ՝ կարենար Քեզ յուշե՛լ
Ո՛չ մէկ հին կամ նոր լեզու,
Քընարե՛լ եւս առաւե՛լ...

Քան այն զոր Դուն ես ինքնին,
Ամբողջական միս-ոսկոր...
Կենդանութի՛ւն անքըննին,
Հովուերգութի՛ւն դաշնաւոր...

Ամէնուն պէս կ'ընէր ինքն ալ...
Ժամը իննին շաբաթ գիշեր,
Ժամադրութեան մը կ'ըսպասէր,
Մէթը ոյին շո՛ւըլ, «Փլաս-Փիկալ...»

Ազա՛տ աղջնակ ընտանիքի...
Ազա՛տ արզայ մը կ'որոնէր՝
Որ հրաւիրէր զինք խընջոյքի
Ու վերջն ալ տա՛ր, քիչ մ'իրեն Մէր...

50

Բարիզ, գեղադէմ Բարիզ...
 Քու ո՞ր աչիդ, ո՞ր շըրթիդ,
 Ո՞ր ծաղկահիւս ու փըթիթ,
 Մարմնոյդ արդա՛ր բաժնեմ զիս...

Քու ո՞ր մէկուդ յանձնուի՛մ,
 Դուն ա՛յնքան ցա՛ք ու ցըրի՛ւ
 Ու ա՛յնքան ես բազմաթիւ,
 Մինչ ես կարճ կեանք մը ունիմ...

4-11-34

51

Սքանչակե՛րտ բըջադաշն, քան Երազուածն
 Հոգելո՛յց,
 Համադրութի՛ւն կենդանի... իո՞ր
 Պաշնամուը ծիրերու...
 Արդիահեւ ձեր կազմին, պաճուճանքին
 Աիրերդո՛ւ
 Ու իմ թշուա՛ռ ստուերին միջեւ խըրա՛մ
 անմատո՛յց...
 Գեղգեղանքին ձեր ի լո՛ւր, կամ դայլայլին
 Հոգեթո՞վ,
 Ինչպէս թըռչնոց՝ որք ճախրե՛ն տանիքներու
 Եթերի՛ն...
 Կը հետեւի՞մ անսուաղ, իբրեւ որսորդ
 Օդապարի՛կ թըռիչքնուդ իմ հետեւա՛կ
 մը անզէ՛ն,
 ըսպասով...

53

Այսօրուան մէջ հանգրուան,
կենաց լըրման ընթացքի՛ն,
Տօնե՛նք Փառքը մեր կեանքի՛ն,
Լո՛յսն ու տարե՛րքն իր համա՛յն...

52

Ծունկերուս վրայ ուժ չըմընաց
Փողոցները չափելէ՛ն...
Սիրող սիրուս, ամէնուն բա՛ց:
Աղքատ, տո՛ւն դարձայ նորէն...

Ու մորթիս վրայ որպէ՛ս խեցի,
Կալանաւոր, սիրամփո՛փ,
Մաղձ ու թարախ վիժեցուցի՛
Որ զիս բուժե՛մ Սէրէս որբ...

Օրն է շըքե՛ղ գըլգըլո՛ւն,
Խորքին վըրայ Անհունի՛ն,
Կենդանութիւն Քեզ ողջո՛յն...
Ողջո՛յն Երկի՛ր ու Երկի՛ն...

54

— Շողա՛կ անտաշ՝ բայց յարգի՛ —
 Դէմք մը՝ որ մո՛ւնջ կ'առինքնէ՛ ...
 Բարբառ կամ Դիրք անհարկի՛,
 Զարդեղէննե՛ր վըրփուրէ ...

Պարտադրութի՛ւն ուղղակի,
 Խո՛ւնկ արծարծող կամ հալուէ՛ ...
 Բա՛րկ իգութիւն դեռատի՛,
 Մի՛րդ թաւշամորթ մարմինէ ...

8-2-35

55

Դիմագիծէ՛ դիմագի՛ծ,
 Պըտո՛յտ ձըրի ու փարթամ ...
 Զո՛յլ անդրիներ գեղածիծ,
 Դիցանոյշնե՛ր պերճ ու թարմ ...

Ու խորն անոնց խորհուրդին,
 Ի՛նչ հանդէս ու խըրախճա՞նք ...
 Սիրարբուքնե՛ր ցայզային,
 Երջանկութեան ամէն ջանք ...

12-2-35

56

Աւազանին ջուրն է սառած,
Նունուֆարներն ամբողջ խեղդուեր են ծոցին...
Ճընճըղուկներ շուրջը թառած,
Կը դողդոջեն ու կը կըտցեն սառ ու ձիւն...

Մինչ երջանիկ այցելուներ...
Կիրակնօրեայ բըրդեղէններ ըզգեցած,
Կը վազեն վար, կը ճեմեն վե՛ր,
Կըծու բուքը իրենց խաղընկեր ըրած...

16-2-35

57

Սիկառէթիդ ծուխին մէջէն
(Թագուհիի մը պէս բազմած)
Նայուածքները զիս կը կանչեն,
Սըրճարանի «դուստր անաստուած»...

Ո՛չ, մի՛ նայիր ինձ այդպէս ծուռ,
Հետաքըրքիր չեմ ես այսօր,
Քեզ մըսխելու համար ի զո՞ւր,
Ո՛չ սիրտ ունիմ եւ ոչ ալ փող...

17-2-35

58

Լոկ մարմարիոն գուճերն իր
Տիպարն արդէ՛ն կը յուշեն...
Սըրունք, ազդըր, զիստ ընտի՛ր,
Ալապաստրէ իրան չէ՛ն...

Ու ծոծրակ մը գեղուղէ՛շ
Կոթուն՝ դէմքին կաթ - սաթէ,
Սըխրապատում ու խենէշ,
Ի՛նչ պատարադ կը սարքէ...

59

Բացուի՛ր, բացուի՛ր մըռա՛յլ հոգի,
Հոգեւոր խաղ եմ ես սարքեր,
Նուիրումի մըրցանիշին
Համար գրաւ եմ ես մըտեր...

Գըրչաքանդակ մանրանըկար
Սա տողերուս բազկերակին
Ո՞վ աւելի լեզու կուտար
Թէ ոչ արեանս ո՞վ գու Խանդն իմ...

60

Տարիներուն համը աւերն, աղճատեց քեզ
կըրճատեց,
Ատամներըդ փըտեցան, խարխըլեցան
թափեցան,
Վարդն այտերուդ, լոյսն աչքիդ նուաղեցան
կի՞ն տարէց,
Բուրվառ էիր Երազի, այժըմ դարձար
մոխրաման...
Ծաղրանըկար ծայրայեղ, յիսուն տարուան
պատմութեան...
Երբ Գեղն ու Շնորհն համընթաց, կ'ընծայէին
Քեզ շըքեղ,
Տիպա՛ր էակ Արուեստի, ներշընչարա՛ն
մոգական,
Ա՛հ, այս որքա՛ն ես փոխուեր, որքա՛ն
դարձեր ես տըգեղ...

61

Նո՞ր կը բացուի հրաւէրներուն
Ու չի ճանչնար խայթերն անոնց
Որոնց թոյնէն մարդիկ խոհո՛ւն,
Տարակոյսն են զիներ վաղո՛ւց...

Ծուղակներու շուրջը բողբո՞ջ,
Իր անպաշտպան հրապոյրներուն
— Փորձառական արդի դպրոց —
Ո՛ղջ սէրերուս ցանցն իմաստուն...

62

*Զարակներու, մականուանեաշ
ROLAND-GARO և FRANCIS-ARMÈNHԱ*

Անուննիդ օտա՞ր, երկիրնիդ օտար...
Ուր պիտի ապրի՞ք, ունենաք տուն, դիրք,
Տարինե՞ր գուցէ, դարե՞ր ընդերկար,
Սերունդ առ սերունդ պիտի ընձիւղի՞ք...

Խըլեակներ վըտի՞տ ու հայրենազուրկ...
Սերմե՞ր հայրազի դարերով պանդուխտ...
Չեր հայ ծագումը մի՛ ուրանաք դուք,
Յարատեւցուցէք մեր նախնեաց սուրբուխտ...

63

Գըլիսարկ, մուճակ, չագանակ,
Դըպրոցական աղջընա՞կ...
Ծամեր ծոծրին ոլորո՞ւն
Խըղունջի պէս դալարուն...

Անձրեւանոց մ'իրանին,
Գօտին ճողփո՞ւն, մէջքն ի վար...
Ալետատա՞ն քայլ փոխին...
Մինչ կըշտապէ զառիվայր...

64

Ծամե՛ր հազուագիւտ, ծամե՛ր գինեփայլ,
Ճերմակ պօրտոյի՞ թէ շամբանեայի՝
Ուր բիւրեղ բաժկէն ըռոայլաշըռայլ
Հոյսերուն դիմաց կ'ոգեցընցուղի...

Ծամե՛ր գըրգըռիչ, ծամե՛ր ոգելից,
Պօրփիւր ծոծրակին, պըսա՛կ կախարդիչ՝
Ուր թէ աչերըս մոլորին մի քիչ,
Կարծես կ'այլայլիմ ես անգիտակից...

5-6-35

65

Քընաթաթա՛խ սարաւանդ
Կուսակընիք մերկութեան՝ ...
Ուր ծաղիկներն Երազին,
Ծի՛լ կը բանան, բո՛յր կուտան...

— Հեշտափըրփուր խօ՛լ կարապ —
Մըտածումըս կը ճեմէ...
Բարձունքներուդ գեղադի՛ր,
Հովիտներուդ զառիթափ...

66

Քեզի համար քերթուածն այս,
Սեղմ ծիրերուդ լուսանցքին՝ ...
Քու հարսնացու, մայրահա՛ս,
Կուռ ծիծերուդ կոչումին ...

Արդա՛նդ անհերկ ... կո՛յս մարմին ...
Գուցէ՛ այսպէս տարինե՛ր,
Մընան զո՛ւսպ ու չըբերրին ...
Քանի դպրոց երթաս դեռ ...

67

Նուրբ հասակն հազի՛ւ, գետնէն բարձրացած,
Ծիծերն իր արդէն պըտղե՛ր են, յորդէ՛ր ...
Այս ի՛նչ արտակարգ աւիշ է Աստուած ...
Այս ի՛նչ վաւաշոտ, հրապոյր ու դընդէ՛ր ...

Բամբի՛չ վաղահաս, փափկասուն սընդուս ...
Անդիմադրելի դուստը՛ր հեշտութեան ...
Խարանէ Գեղըդ շուա՛յտ խանդերուս,
Օձէ՛ զիս, թըրծէ՛ սիրովդ հուրհուրա՛ն ...

68.

Ախոռն պալատ էր մեզի,
Թշուառութիւն երջանիկ,
Մուրացիկներ Երազի,
Չունչինք հաց ու խըցիկ...

Կեանքն հոսելով տարիներ,
Հուն մը պեղեց ակամայ՝
Ուրկէ ալ դուրս չի ելլեր
Բանտարկեալ մըն է հիմայ...

5-9-35

69.

Մառախլապատ Երկընքին դէմ
Լերկ անտառին սուդը տեսա՞ր,
Ծառերուն մերկ ոստերն ամէն
Հառաշանքներ ունին հազար...

Անձրեւ, մըշուշ, հովեր դըժնէ...
Կը կըրծեն զինք, կը բորոտեն,
Ան կը տոկայ ու կ'ըսպասէ
Գարնան դարձին յամառօրէն...

1-12-35

70

Անսայթաք ո՛չ մէկ կռուան,
Հոգիի ո՛չ մէկ խարիսխ...
Տարտա՛մ ծըփանք տեւակա՞ն,
Աղերսի ո՛չ մէկ կորի՛զ...

Իմաստութի՛ւն խեղանդամ...
Շուա՛ր Արուեստ, կոյր կամ շել...
Կոչունքի ո՛չ մէկ պատղամ,
Փո՞րձ սաղմնային, ցա՞րդ անծիլ...

71

Դո՛ւն հազուագիւտ դէ՛մք սիրուն,
Ես ալ անկո՞ւշտ սիրահար...
Պատահեցանք մէկ-մէկու,
Հստեղծեցի՞նք մենք զիրար...

Ցա՛յսօր Աշխարհ չիմացաւ,
Ողբերգութի՛ւն վը ուրիշ...
Որ նո՞յնքան բուռն ու անբա՛ւ,
Սիրոյ մըլլար մըրցանի՛շ...

72

Սուրբ ակնածա՞նք իգական
 Դէմքին վըրայ խըտացած...
 Արտայայտիչ կուսութեա՞ն,
 Անեղծ հոգւոյ առեղծուա՞ծ...

Համըր, բայց խո՞ր համակրանք...
 Արուեստական ո՛չ մէկ հիւս...
 Խանդաղատա՞նք բազմերանգ...
 Զո՞ւտ ընդոծին բո՞րբ մազնիս...

73

Կանա՞չ ուլունք աչուկնե՞ր...
 Յուռո՞ւթք կեանքի Զարին գէմ...
 Զե՞զ կախեր եմ գանգրահեր
 Իմ իտէա՞լին բաշերէ՞ն...

Վերե՞լքիս մէջ բարբարոս,
 Թէ սայթաքիմ գահավէժ...
 Զեր հովանին հեթանոս,
 Թո՞ղ փըրկէ' զիս անկումէս...

74

Մատակարա՞ր հոգիի,
Պաշտամունքի հուսկ տիպար...
Քու գոյութիւնդ կարելի,
Ցընո՞րք մըն է շինարար...

Նոր դաշինք մը հաշտութեան,
Աշխարհի եւ մեր միջեւ...
Սիրաբբուքի ճո՞խ սեղան,
Ուխտաւորի նո՞ր պարզեւ...

4-1-36

75

Խարտեա՞չ խոպոպներ, ցոլքերով ոսկի,
Կը գգուեն անվե՛րջ, ծոծրակ մը ցօղո՞ւն...
(Լուսանցիկ ողորկ, բիւրեղ ապակի)
Ուր կ'ուրուազծուի հեշտա՞նքը բեղուն...

Քալուածք ծեքծեքո՞ւն, մարմին կաղապա՞ր...
(Բանաստեղծական Յանդառո՞ր Քերթուած).
Աձման տարիներ, համա՞կ Երգ ու Պա՞ր,
Հզգայուն Քընա՞ր, սատափով կիտուած...

76

Քընաթաթա՛խ աչերով,
Զեր ձեւերուն վայելքին,
Կը հետեւի՛մ տակաւին,
Միրամփո՛փ ու հոգեխռո՛վ...

Դո՛ւք սըփոռուած ամէ՛ն տեղ,
Ինչպէս շողե՛րն Արեւին,
Ինձ ճողոպըրիլ չէ՛ դեւրին,
Զեր հետքերէն լուսագե՛ղ...

23-9-36

77

Քու պատանի Գեղեցկութեան,
Սերոյ աղը դեռ չէ՛ ցանուած...
Հաւատամքըդ չունի՛ խարան,
Յոյսիդ կայծերն են վերամբարձ...

Հընչուն բարբառդ հազի՛ւ լըռած,
Շա՛րժ ու նըշմարդ համապատկան,
Մըտածումիդ լեզո՛ւ կուտան,
Ու իմ սըրտիս տեւական կա՛յծ...

26-9-36

78

Սըրտէս չարձակուած ո՛չ մէկ բառ ունիմ
Սա տողերուս մէջ ոգեկոչական...
Իցի՛ւ ըլլայիր վարդըս մըտերիմ,
Ու բո՛յր ձօնէիր երրեւ պատասխան...

Քեզ մըտածումիս թագուհին ըրի,
Օրերէ՛ ի վեր, սերտեցի երկա՛ր...
Բայց դուն անծանօթ այս կամաւորին,
Անունն ու հասցէն մի՛շտ անդիտացար...

27-9-36

79

Քեզի պիտի հետեւէի՛,
Փողոց-փողո՛ց գաղտագողի՛...
Պիտ' ուզէի՛ գիտնալ հասցէդ,
Ու հանդիպիլ երբե՛մըն գէթ...

Գեղէդ ոչինչ կ'ակընկալե՛մ...
Տարիքս արդէն կըկներ է Քեզ,
Սակայն կ'ըղձամ, իրրեւ բըզէդ,
Զեկ-զակ շըրջիլ, հասակիդ դէմ...

Զի՞ քալեր... ա՛յլ կը սահի՛...
 Թէեւ չունի՛ սահնակնե՛ր,
 Աճապարանք նազելի՛
 Հետքին լուսա՛նցք անըստուեր...

Թի՛ռ ոստոստուն հոգիի...
 Անութին տակ նոր գըրքեր...
 Շարժանըկար կենդանի,
 Տեսանելի մայթն է վեր...

Գարնանային ոստերու պէս առաձի՛ք
 Ճըկուն հասակ մը կը ճեմէ՛ կըշուաւոր...
 Խարտիշածամ խոպոպներէն ցոլացի՛կ,
 Ոսկի շողեր կը բաշխուին հեշտօրօ՛ր...

Զմայլումէս գո՛ւրս կը նետուիմ ետեւէն,
 Իր լուսագէս ակօսին մէջ ծըփալո՛ւ...
 Սպառելու ձօնած բոյրերն համօրէն,
 Կիթա՛ռ մարմնոյն շընորհները կառթելու...

Նոյեմ. 1936

82

Տարիքին հետ, միտքն ու մարմինն աճեցա՛ն,
իմաստութիւնն զարդարեց Զինք ու յըղկե՛ց,
Անէմօնի փունջի մը պէս բաղմերանդ,
Հրապոյրներն իր շատցա՛ն առէջ առ առէ՛ջ...

Դի՛ր, գիտութիւն... թի՛ւ, հըմտութիւն ու
Արուեստ,
Խորացուցի՛ն ու պարզեցին ոլորտնե՛ր...
Սահմանաւորն դարձաւ հոգի մ'անջրալե՛տ...
Անհիւրընկալն՝ ամենողո՛րմ, մարդասէ՛ր...

19-11-36

83

Մէկը միւսին ետեւէն,
Փաթթեմ, վառեմ ու ծըխե՛մ...
Մըտահո՛գ եմ ես նորէն,
Իմ եղբայրնե՛ր անձիս դէմ...

Կրծո՛ւ թոյնը ծըխախոտ,
Ուզա՛ծին չափ խայթէ թող,
Դալուկ շըթներս ու կոկորդ...
Ու զիս կըքէ՛ դէպի հող...

84

Հուսաշո՛ղ ճամբայէն, կը քալեմ առանձին...
 Մարմինս ողողուած ցընցուղէն արեւուն,
 Աչերըս խըտխըտո՛ւն ցուլքերէն ասվալթին...
 Խոհերըս հեռաւո՛ր կանչերով առլրցո՛ւն...

Հովիկը կը գըգուէ՛ այտերըս կըճռամած...
 Մարսուոնե՛ր կը հոսին քունքերէս անընդհատ,
 Շըրթներուս մորմոքին սիկառէթ մը սեղմա՛ծ,
 կը ծըխե՛մ ու կ'անցնիմ հոգիով անապա՛տ...

13-12-36

85

Խըմորի պէս կակո՛ւղ մարմին,
 Սեղմէ՛ կըբծքեղ որքա՛ն կ'ուզես...
 Դիմադրութիւն ամենեւի՛ն,
 Ամբո՛ղջովին անձնատո՛ւր Քեզ...

Դարձո՛ւր, դարձի՛ր..., ճըկէ՛, ճըկի՛ր...
 Քամէ՛ սըրտիդ Սէրն իր հասուն...
 Բաղեղի պէս պըլլուած իր
 Շուրջն իրանին գարնանարբո՛ւն...

13-12-36

86

Կորընթական զոյդ սիւնե՛ր, սըրունքներն իր
 ուղղաձի՛դ...
 Գեղեցկապաշտ յոյզերու յաճախանքով
 յօրինուա՛ծ...
 Վե՛ր կը բըռնեն իրանն իր, իբրեւ խոյա՛կ
 բարձրադիր՝...
 Ուր կը հանդչի կիսանդրին, դիցուհւոյ մը
 ոսկեմա՛ծ...

Դէմք մը մաքո՛ւր, մինչ ակնարկ՝ —
 Մըշուշասքող Առաւոտ —
 Իր Եսին մէջ ինքնարա՛ւ ու Եսին դուրս
 չնորհատու...
 Էակ ըստոյդ, շընչաւոր, համակրութեանց
 բո՛յլ-գաղութ,
 Մեր աքսորին բաղդակից, բընակիչ մը
 հարսնացու...

87

Յուշերուս մէջ բո՛ւք ու բորա՛ն...
 Դիցանոյշներն եկա՛ն, գացի՛ն...
 Համբոյրներու բոցերն ունա՛յն,
 Երաշտութի՛ւն լոկ թողուցի՛ն...

— Պաշտամունքի թափո՛ւր խորան —
 Կեանքըս դարձեալ հաւա՛տք մ'ունի...
 Մերուածներուն երա՛զն է այն՝
 Որ կը տեւէ՛ դեռ դողունի՛...

27-12-36

88

Անզարդ ու խարխուլ, սենեակ մը համեստ...
 Մէկ դին մահճակալ, վերմակով գունատ,
 Միւս դին վառարան, ածուխի պահեստ,
 Դարան մը գըրքի ու վառելիք փայտ...

Ու խաղալիքնե՛ր, գործիքնե՛ր, տուփե՛ր...
 Ցըրուած կամ դիզուած քիչ մ'ամէն անկիւն,
 Հայկակն ու Կարօն ժի՛ր ու անհամբե՛ր,
 Շուրջն անոնց անքուն. . . Ծընո՛ւնդ իրիկուն...

89

Տասնըհի՛նդ կամ տասնըվե՛ց
 Գարուններով մի աղջնակ...
 Բարբառ հընչե՛ղ, չեշտ երէ՛ց,
 Ծա՛մ խոպոպուած, մանկունա՛կ...

Դէմ-դիմաց ու միս-մինա՛կ...
 Աղերս՝ վըտա՛կ, յոյզ՝ ջըրվէ՛ժ...
 Լո՛ւռ բառերու սուրհանդակ...
 Բայց մեր միջեւ կո՛ւռ պատնէշ...

90

ԳԵ՛Ղ ու ԺՐԱՔԵ՛Մ սերմանուած
Հովիտներէն քաղաքին,
— ՍԻՐԱԼՐԸ՛ՎԿ դայլեր քաղց —
ՈՐՍԻ ԷԼԵՐ են կըրկին...

— ԶՈՒԱՐԱԿՆԵ՛Ր խուսափած
Փարախներէն գիշերին... —
ՎԻԹՆ ու եղնիկն ու քարայծ
ՍԻՐԱՊՈՆԻՆ կը տարուի՞ն...

31-12-36

91

Մա՛ղմ մարդկային ՔԵ՛Ղ ողջո՛յն...
ԴԵ՛Ռ չըծագած արգանդէն,
Այս աշխարհին համար դուն
Կազմ ու պատրաստ ես արդէ՞ն...

Մանրակրկի՛Մ դերերուն՝
Ուր սահմանուած ես կանխաւ,
Տոկուն ըլլաս թէ խոկո՛ւն
Յաղթականներն են սակա՛ւ...

2-1-37

Բուքէն կծուած կարմրախայտ,
Թարմ թուշերուղ խո՛ր համբոյր...
Ու աչերուղ սիրացայտ,
Կախարդ ժըպի՛տ մը տըխուր...

Զի ես չունիմ իրաւունք
Դարպասելու աւելի՛,
Քեզ սիրելու իմ խորունկ
Բառերո՛վըս դարտուղի...

5-1-37

Բանաստեղծի հոգիով
Կը մօտենամ ես Քեզի,
Աշխարհէն կուշտ եմ, բայց սովէ
Գեղոյ, Սիրոյ, Երազի...

Աղքատ հըպարտ մինչեւ ծուծ,
Փարթամութեան աչք չունիմ...
Ագահ քըննիչ մ'եմ վաղո՛ւց,
Դաշնակութեա՞նց մըտերիմ...

12-1-37

94

Լըքուած բոյներ մացառահիւս,
Ամայացա՛ծ են ու թափո՛ւր՝
Ուր ամոլներն կտցահամբոյը
Զե՛ն վուվույեր ա՛լ սըրտայո՛յզ...

Ճարտարարուեստ հեղ դըղեակներ,
Լերկ ծառերու կատարներուն...
Քաղցր յուշարար Անցեալ Սիրոյն,
Տատրակներուն ընտանեսէ՛ր...

23-1-37

95

Սըրտէն զարնուած վըշտով մը դաշոյն՝
Որուն աղբիւրին լոկ ինքն է տեղեակ,
Քերթողը թշուառ կ'ապրի միս-մինակ,
Իբրեւ դեղ, տաղեր ճարած վէրքերուն...

Ոչի՛նչ արտաքին՝ այլ — Վա՛րդ Լըռութիւն՝ —
Որ կը մատնէ մեղ, սէրերուն կըրակ...
Ինքն իր մէջ ամփոփ, ինքն իր մէջ պարփակ,
Ան Երդ կը խարկէ ու կը խըմէ թոյն...

96

Պարտաւորիչ հիւսլատոս
Ճըղճիմութեանն իմ կազմին,
Կուզ ըլլամ թէ կաղ միմոս
Փէտք է կըրկի՞ն երեւիմ...

Այսպէս ընդմիշտ ու ցըմահ
Խեղճ խեղկատակ արարած,
Պիտի կըրեմ ակամայ,
Մահկանացու իմ տարագ...

97

Շեփորուկի պէս բացուած՝ ծ,
Քըղանցները կը յորդի՞ն...
Բի՞ւր ծալքերով քըմահաճ
Երբ կ'ընթանա՞յ պարուհին...

Իրբեւ առանցք երկուորեակ,
Գողտրիկ տոտեղ ոսկեցո՞ւ,
Կը վարեն դաշն իր հասակ
Նազա՞նքներով բերկըամոլ...

98

Պուրակներու նարկիզին պէս,
Հովիտներէն մեր ոստանին,
Դուն կը ծաղկիս, մենի՛կ ու հեղ,
Թէեւ օժառուած, նո՞ւրբ, կաթոգի՛ն...

Տեսքըդ չըքնաղ, բոյրըդ համեստ,
Կը վարակէ թաղն համօրէն,
Օր մ'ալ Սէրը ծըպտած ասպետ
Քեզ կը քաղէ անցած ատեն...

27-1-37

99

Որթատունկի ծիլերուն պէս բընական,
Իր թաւիշէ սեւ գըլխարկին եզրերէն,
Խարտեաշ ծամերն ոլո՛ր-ոլոր դուրս կ'իյնան,
Ու կը բըռնեն զայն կեռանցի՛կ հովին դէմ...

Մինչ վէրէն վար խըլըրդամորթ վերարկուն
Կը պատատէ մատղաշ իրան մը ճապուկ՝
Որ կ'ըշտապէ տոտիկներով ոստոստո՛ւն,
Դիմացի մայթն անցնիլ ընդհուպ խուսափուկ:

100

Մեր Ազգն ալ ունի գըրչի դարբիններ,
Քանդակներ Լոյսի, Խորհուրդի Եթեր...
Ժառանգործ փառաց մեր մատեաններան
Կ'ողջունենք ցեղերն Արուեստով զեղուն...

Ստեղծագործ միտք, ձիրք ու դըպբութիւն
Օժիտն են եղեր մեղուածան Հայուն՝
Զոր մատակարեր է ժամանակին
Եւ երկրիս արի տարրըն է կըրկին...

30-1-37

101

Սուզակ բուստի, մարգարտի,
Կարծեմ դարձեա'լ խորացար,
Լուռ ծալքերուդ խորն խաւար
Որպէս անտա'կ ովկէանին...

Շատե'ր շատե'ր սուզեցան,
Բայց սոսկ խիճ ու տիղմ բերին...
Քեզ կ'ըսպասեմ ափունքին,
Տօնելու դարձդ յաղթակա'ն...

102

Աւազներու գըրգանքին
Հնկողմանած, կիսաքուն...
Կ'ըմբոշինենք հոյզն հեշտագին,
Սիրափըրփուր բառերուն...

Վըստահութիւն քօղահերձ,
Պըտուտակուած կուրծք-կուրծքի...
Խօ՛լ վայրկեաններ տարփահեղձ...
(Երանութիւն լուսոգի՛...)

103

Երբ մարդկային միջոցներէն
Յուսալքուա՛ծ, դառնակըսկի՛ծ
Պաղատանօք Քեզի դիմեմ,
Հայր բընազանց, ողորմէ՛ ինձ...

Երբ գիտութիւնն սահմանաւոր,
Անձըրկի յետս, վըշտիս առջեւ...
Յո՛յց տուր Հըրաշքդ, արտասովոր,
Ու բըժըշկէ՛ Որդիս-Արեւ...

104

Միայն Սէրէտ վարակի՛լ թէ հարկ ըլլայ
եթէ բախտը կամենայ, պարտիմ հըսկել
Որ ուռճանա՛ս, բողբոջի՛ս, իմաստներով
Որպէսզի Երդու ալ Քեզմով սընի, սիրէ՛,
խորանա՛յ...

Բայց թէ կեանքըդ վըտանգած,
Դատապարտուիս հըսաժե՛շտ տալ,
Այն ատեն, ո՞վ որդեալ իմ, չընորհէ որ
Համաձարակ վըշտիս մէջ, իսպա՛ռ կեանքըս
Ու երկուքս ալ, մէկ չուենք, իբրեւ Բողոք
երանեա՛լ...

105

Իմ անհաւատ տըրտո՛ւմ հոգիս
Գըթութեամբըդ բերիր դարձի,
Հայրը իմ կեանքըս աղօ՛թք Քեզի,
Վերադարձո՛ւր ինձի որդիս...

Մըտընջակա՛ն իմաստութի՛ւն...
Ներկայութեամբդ աներեւո՛յթ,
Հըսկէ՛, վըտիտ մանուկ մարմնոյն,
Տո՞ւր ապացոյց արթուն Սիրոյդ...

106

Իցի՞ւ թէ դո՛ւն ալ մեծնաս միւս մանչերուն
 Հասակ նետես զօրանա՞ս . . . պէս կեանքին,
 Տարիներուդ հետ միտղ ալ լուսազարդուի՛
 Ու ես կըքած հետեւիմ Երջանկութեանդ
 մաս առ մաս . . .

Ինձ վերապրի՞ւ պիտ՝ թուի Սէրերովը
 Պիտ՝ չունենամ աւելի բարախում մը
 Քան այն զոր դուն պիտ՝ ըզգաս արարքներուդ
 Այնքան ատեն որ խարխուլ ցոռուկս ափին
 ընթըրի՞ . . .

107

Լոգա՞նք ձըրի բերկրանքի . . .
 Երանութի՞ւն հոգեշիթ . . .
 Երբ կ'ողողես զիս բարի
 Խուրձերուն մէջ Նայուածքիդ . . .

Աստղերն անզօր են ա՛յդպէս
 Երա՞զ ձօնել, ա՛չք քըթթել . . .
 Այդ բիբերէդ սըրտակէզ
 Սէ՛ր կ'առուակէ՛ շողի տեղ . . .

9-3-37

108

Կամ դուն առաջ պիտի չուե՞ս
 (Օ՛ դա՛ռն հեղո՞ւկ, հեռացո՞ւր Տէր)
 Կամ թէ նախ ես — Հա՛յր օրհնեա՛լ ես —
 Դուցէ՛ մէկտեղ, դեռ չեմ գիտեր . . .

Բայց կաւաթուրծ Հայր ու որդի,
 Պիտի յանդինք նոյն վախճանին . . .
 Իցի՛ւ թէ Կեանք մ'Երանելի՛
 Մեզ հանդիպիլ տայ վերըստին . . .

10-3-37

109

Անջըրպետին ծագերէն լուրիթ
 Մեզ հոգացող Ա՛սաբդ բարի . . .
 Շառայլներուդ կենսածընո՞ւնդ
 Փա՛ռք, երախտի՛ք մըշտամենի . . .

Ամենաբոյժ Ա՛կ խընդութեա՞ն
 Որ ուղխօրէ՞ն մեզ կը բաշխիս
 Դարձեալ պարզեւդ է, որ ա՛յսքան
 Խոր Սէր ունինք — ես ու որդիս —

17-3-37

110

Ամէն անդամ անցնելուս, յաճախորդի
կըսպասէ...
Ցուցափեղկի մը կոթնած, կամ մայթն ի վեր
յամբաքայլ...
Թարթիչներով սընդուրուած ու շրթներով
կեռասէ,
Հրաւէ՛ր կուտայ անցորդին իր լարերէն
արթենա՛ւ...

Ափսո՛ս իրեն սէրերուն... ներողութի՛ւն
երանի՛...
Հրապոյրներուն տիրակա՞ն, մարմնոյն
կերտին դիւթակա՞ն,
Որ բազմաթի՛ւ անդամներ, մարտիրոսուած
հոլանի՛...
Կ'ըլլայ կենաց խըրախճանք, նախաճաշակ
չայրութեան...

111

Այս տարիքէն վերջ, Քեզ սիրաշահի՛ւ...
Ա՛լ կարելի չէ, ափսո՛ս ինձ համար...
Ես քառասունոց, մինչդեռ դուն հազի՛ւ,
Քըսան տարեկան պարի՛կ մը չըքնաղ...

Դո՛ւն վերե՛լքի մէջ, մինչ ես վայրէջքի,
Համեմատական արժէքներ խոտոր,
Ինձ հարկաւոր է լոկ վերածընի՛ւ
Կարթելու համար Հոգի՛դ սիրաւոր...

112

ԿԱՐՈՅՑԻՍ

Այբբենարան բերեմ Քեզ՝
Որ մեր տառերն ալ սորվիս:
Կարդա՛ս, գըրե՛ս ջուրի պէս,
Մաքո՛ւը, ինչպէս կը խօսիս...

Օր մ'ալ երբ ես ա՛լ չըլլամ,
Բանաս տաղերս իմ ամէն,
Սուզի՛ս Հոգւոյս շա՛տ անդամ,
Միրես Լեզուղ Հայերէն...

23-3-37

113

Տառապանքիս որակը բա՛րձր է ու յորդ...
Զիս ներկայէն Ապագայի տօներուն
Առաջնորդող աշտանակներս են աղօտ...
Հա՛յր իմ ջահէ՛ սըրտիս Մէրըդ քաղցրանուն...

Ի՞նչ հեշտ թուի, անճար Հոգւոյս վըշտագին
Զաւեշտէն վերջ, ծիծաղով մը վրիժառու,
Ըմպել խընդիւ, հուսկ փըրփուրներն հեղուկին,
Նետուի՛լ գիրկը Անէութեան մըտարբո՛ւ...

26-3-37

ի՞նչ ալ ըսեմ, ի՞նչ ալ գըրեմ
Անբաւարա՛ր թուի ինծի...
Զեր տարիքին բողբոջներէն,
Կախարդական բո՛յր կը յածի'...

Ո՛ւր որ ըլլամ, ի՞նչ ալ ըլլամ,
Նոյնիսկ յորդա՛ծ բաժակ վըշտի...
Վայրկենական ուշքի կուգամ,
Երազելու ի տես Զեզի...

27-3-37

Փոխարինե՛լ... կարելի չէ՛,
ինչ որ տուիր ցարդ ինծի,
Դո՛ւն Աղբիւրն ես, ես սրուակն եմ՝
Որ անդադար կ'ընդունի...

Քու մարմինիդ հիւլէներէն
Անմահութի՛ւն կը թորի...
Հնծայուելու անվարձօրէ՛ն
Անժառանգի, թըշուառի...

116

Ճըկո՞ւն, ճըպո՞տ սըրունքներով,
Կ'արագանայ իբրեւ բալխիր...
Սուրհանդակի մ'արտօրանքով
Ու անցորդի մը չի հըպիր...

Ոմքն շրթնով, ոմքն աչով
Խայծ կը զըրկէ, մաղթա՛նք կ'ընէ...
Սակայն ինք լո՛ւրջ խիստ մըռութով
Կը խուսափի՛ աժան Աէրէ...

28-3-37

117

Ինձ բաղդակից ապրողներուն զուգընթաց,
Տարիներո՛վ պըտըտցուցի՛, ցուցուցի՛
Դէմքս ու հոգիս ծընողներէս ժառանգած,
Արու եւ էդ ամբոխներուն ցանուցիր...

Պարտքըս էր այդ, կատարեցի անդիմակ
Երա՛զ ցանել ու Ե՛րդ հընձել անդադար...
Աստուածամերձ իտէալներու պատուիրակ,
Պաշտօնիս մէջ եղայ սիրո՞ղ ու արդա՛ր...

20-4-37

118

Գըլիսարկն իբրեւ գոհարատուի,
Կը ցուցադրէ նո՛ւշ աչերուն,
Ծիածաններն որպէս զըմրուխտ,
Փայլով անրի՛ծ եւ իմաստո՛ւն...

Ու ականջին նո՛ւրբ եզրերէն,
Խարտեաշ ծամերն սանտրուած ե՛տ...
Ճառագայթնե՛ր կը ջըրվիժեն...
Տօսախ ծոծրին քանդակագեղ...

119

Ճերմա՛կ, կարմիր, դեղնամած,
Խիւս մը վարդի թերթերու,
Ճառագայթով շաղախուած,
Վանակն ազնիւ լուսատու...

Իւրաքանչիւր զգայարան
Նուրբ ծիրերով յօրինուած,
Երկ Արուեստի բընական,
Արարչատիպ մի Քերթուած...

120

Եկո՞ւը ո՞րդեակ, թեւերուս մէջ հայրենի՛,
Դի՛ր թուշերըդ սա կարծրամորթ այտերուս...
Համբուրե՛մ Քեզ, սեղմեմ սըրտիս խոռվայո՛յլ
Ա՛յնքան ուժգին մինչեւ որ ան պաղըշկի...

Ո՞ղջ ենք այսօր, անյա՛դ ապրինք սիրտ-սըրտի
Տարիները գուցէ բարիք չըբերեն,
Դիմաւորենք մեր կարծ օրերն Աշխարհի,
Էլլանք զուարթ ու գոհաննանք Արարչէն...

24-4-37

121

Զըմըռսե՛լ Քեզ հրապոյրներուդ մէջ բոլոր,
Դեռ չըհատած, ժամանակէն չըխամրած,
Ու ցուցադրել սերունդներուն նորանոր,
Թէ ապրեր է Քեզ պէս շըքե՛ղ արարած...

Խաչափայտի մասունքին չափ համազօր,
Տաճարի մը մէջ պահպանել Քու Մօմիան
Ու այցելել իր ձեւերուն ամէն օր
Իրբեւ Տիպար առատահոս Ներշընչման...

5-5-37

122

Երբ կը վազէր, կը ճողփէի՞ն ծիծերն յուռթի՛,
Առողջ կուրծքը կը թակէին միանուա՛գ,
Ինչպէս սալ մը որ իր վըրայ միշտ կ'ընդունի՛,
Դարբիններու լայն մուրճերուն դա՛շն
Համազարկ...

Պատանեկան տարիները ըլլըրացած,
Բացառութեանց Բացառութի՛ւն մ'արարչական
Միքէլ-Անժի Արուեստովը ձեւակերտուած,
Ապրազրա՛նք մը կատարեալ իմացակա՞ն...

123

Գիշերաշըրջիկ հուրիներ անթի՛ւ
Gare St.-Lazareէն Rue Chaussée d'Antin
Տասը Փըրանքի ծախու սէ՛ր, պատի՛ւ,
Լըկանք ու տըռիփ ամէն տեսակէն...

Երիտասարդութի՛ւն ու Գեղեցկութի՛ւն,
Թանկ հընութիւննե՛ր տրուած աւարի,
Գըրեթէ՛ ձըրի վարձու են իսկոյն,
Ամէն քըսակի գիւրամատչելի...

I 24

— Քըսանամեայ հասուն կեանքի փորձաքար,
իմաստներու կեդրոնաձի՛գ վառարան —
Ակութ Հոգւոյդ պըրիսմակէն երինավառ,
Բիւրեղաշիթ Խո՛ր-Նայուածք մը քու Ընծա՛ն...

Երախտընկալ ընդունարան իմ Հոգին
Կրկնապատիկ լըրջացումին մէջ անզէ՛ն...
Տեղի՛ կուտայ բարեացակամ նուէրին,
Փոխադարձող Զըրոյցով մը Ակնեղէն...

19-5-37

I 25

Բարեկամիս՝ Լեհոն ԶՈՐՄԻՍԵԱՆին

Մըշտադալար ծառի մը պէս դարաւո՛ր,
Բի՛ւր արմատով կառչած հողին հաստաբուն,
Հոգիիս բաց պատուհանին դէմ կանգուն,
Առողջ բոյրըդ շընչել կուտաս ամէն օր...

Ուրականներ ու մըրիկնե՛ր թափառող
Կը ցընցեն Քեզ ու տապալել կը փորձեն՝
Բայց դաշնաւո՛ր երգեհոնիդ լարերէն,
Նոյն Մեղեդին ինձ կը հասնի անփոփո՛խ...

19-5-37

Կանա՛չ ծովուն աղի բոյրը սունդերուն,
Ծըխախոտի գուլաներուն թաթաւո՞ւն,
Ամուրի մը կը սըլքտայ քարափին՝
Ծամե՛ր խըռիւ ծըխամորճը կըլափին... .

Բոպիկ ոտքին ձերմակ տըրեխ անցուցած,
Չըկոճկուած արեւախանձ կուրծքը բա՛ց...
Հորիզոնին ծաղիկներէն կ'արածի
Ու կ'արբենայ լուսախաղէն ծիրանի... .

Լըսնոսկիէ ճանակի մէջ ագուցուած,
Մանրիկ դէմքը պըճըլտացո՛ղ կարկեհան...
Յըղկուածքով ու տաշուածքով շողարծա՛րծ
Գոհա՛ր մ'անդին — բի՛ւր աչերու վառարան —

Ժըպիտներուն ցոլացումէն անապա՛կ
Ու ակնարկին կուսութենէն անդրադարձ...
Մոլորեցայ զերդ յործանաց մէջ սուզա՛կ,
Անկարելի՛ սիրո՛վն իրեն կըլանուա՛ծ... .

128

Փողոցներու մըթաստուերէն
Նազելաձե՛մ կը տողանցե՛ն...
Գիշերանոյշ նո՞ւրը իրաններ
Արդուզարդով վայելչադե՛ղ...

Մէքրօ, քախի, օթօպիւս, քրէն
Ժողովուրդին կըսպասարկե՛ն...
Ազա՛տ գիշեր, ակատ լոյսեր,
Կերուխո՞ւմ, պա՛ր, խըրախճա՞նք, սէ՛ր:

20-6-37

129

Արբեցումէս բընա՛ւ ինք լուր չունենա՛յ,
Երբոր գառնամ սիրով շուրջն իր սարսըռա՛մ...
Զերդ ծաղկի մը որ անտեղեակ միշտ մընայ,
Հոտոտողին Անըրջանքէն հոգեհամ...

Իր մանկական երդիքին տակ երախայ,
Իմ սեփական երկինքովըս վերանա՛մ,
Թո՞ղ զըրուցէ՛, շաղակրատէ ու խընդա՛յ,
Մինչ բորբ սիրտըս հըրահըրի՛ լիակամ...

13-7-37

130

Ի է մք մը թօջնած, գա՞նկ մ'ալեհեր,
(Ծաղրանըկար մի ցուցանա՛կ . . .),
Քառասնամեա՛յ կեանքի պատկեր,
Տարապարհա՛կ վըշտի շալա՛կ . . .

Ու լըռանի՛ստ Եսին պահակ,
Վիլլաներու ոճին առջեւ . . .
Չըլլայ որ ան իր աբտակա՛րդ
Թոյնը սրսկէ՛ իբրեւ պարգե՛ւ . . .

131

Անտառին չոր տերեւներուն,
Գորգին վըրայ նարընջագո՛յն . . .
Երթա՛մ վըռուի՛մ կուրծքըս հողին,
Շընչե՛մ շունչն իր, ծըծե՛մ լեղին . . .

Տաք թուշերըս զո՛վ երեսին,
Եղունգներով ճանկա՛ծ մարմնին,
Խոստովանի՛մ ուխտ մ'անանուն
Որ նոյնանա՛նք չեկած Գարուն . . .

132

Այս գիշեր պիտի գա՞մ,
Հոգիէդ բաղձալո՞ւ
Որ սիրե՞ս զիս ընդմիշա
Առանձ Քեզ յանձնելո՞ւ . . .

Աչերուս լըճին մէջ,
Նայուածքըդ հոսելո՞ւ . . .
Անապակ սիրովը
Ընթացքըս պարզելու . . .

133

ՀԻՒԱՆԴ ՏՂԹԻՄ

Ես հայրիկդ, դուն որդիս
Սըբտիս մինչեւ զարկն յետին,
Պիտի սիրե՞մ Քեզ յաստիս,
Գուցէ Մահէս ալ անդի՞ն . . .

Ըղձանքներուս «Ճի՞ր-կաթին»
Կեանքդ համազօր իմինիս,
Պէտք է ապրիս ու աճի՞ս
Որ ես տեւե՞մ քու շուքին . . .

134

Սընդուս մարմինդ, ծուէն-ծուէն
 Բազուկներուս մէջ տըրորե՛մ
 Իր հիւսուածքին մետաքսեղէն
 Բոլո՛ր թելերն քակեմ, լուծեմ...

Ու դուն միայն ժըպտի՛ս բարի,
 Յօժարամիտ դիտե՛ս, ներե՛ս ...
 Թո՛յլ տաս սիրտըդ որ ճարակի
 Աստուածամե՛րձ յուզումներէս ...

10-12-37

135

Ահա՛ եկայ ու կ'երթամ
 Նըպատակէս անտեղեակ...
 Կեանքըս տըրտո՛մ ու տարտա՛մ
 Եղաւ նիւթին հըպատակ...

Ծընայ առո՛ղջ, կենսունակ,
 Արդ կը մեկնի՛մ խարիսըլա՛ծ...
 Խաղացի դերս խեղկատակ,
 Զըղջումս ժառա՛նդ ինձ մընա՛ց...

30-1-38

Էա՛կ քընքո՛ւշ, ըգգայուն,
Լա՛ր բանաւոր իմաստի . . .
Քու կամաւոր սէրերուն,
Տիեզերքն համայն տա՛մ ձըրի՛ . . .

Յարերային օրինաց
Դէմ ընդվլզող Ճռխութիւն . . .
Կենաց խաղէն ընձիւղա՛ծ.
Ոգի Սիրոյ ու Բարւոյն . . .

Բոցի՛ մը պէս լըզուըոտեմ Քեզ
Լեզուակներով բի՛ւր ու բոսոր
Մաշեցընե՛մ, հատցընե՛մ ես
Մեղրամոմէ դէմքը դ աղուոր . . .

Յեաոյ ուսերդ այդ թաւշամորթ,
Կո՛ւրծքըդ, ծիծե՛րդ նորագողողո՛ջ . . .
Լա՛նջքըդ ողորկ, զիստերը դ յորդ,
Ալապաստըէ մարմինդ ամբողջ . . .

138

Սահմանաւոր ծիրերէն
Անսահմանին երբ մըտնեմ . . .
Լացէ՞ք իմ հին կեանքին հէ՞ք
Ու հրճուեցէ՞ք որ ա՛լ չեմ . . .

Ինչ որ ունիմ անաղա՛րտ,
Պիտի տանի՛մ ինծի հետ . . .
Մընացածը տարրամա՛րդ
Պիտի նեխի իբր անպէ՛տ . . .

3-3-38

139

Առեւանգուած Գեղդ աչերէս
Որպէս գոհա՛ր ականակուռ,
Ազահօրէ՞ն թաղեր եմ ես
Էութեանս խո՛րքը թաքուր . . .

Ոչ ոք կըրնա՛յ, կըռահել զայն
Ո՛չ ալ գիտէ արժէքն անոր . . .
Միայն ե՛ս եմ որ ամէն օր
Կը սընանիմ Միրովն անձա՛յն . . .

15-3-38

140

Ի՞մ հոգիս թէ իր հոգին
Ո՞րն է արդեօք գերազանց,
Երբ հանդիպիմ սուրբ դէմքին,
Կը խոնարհիմ աննախանձ . . .

Ակնածագին կը սուզիմ
Սըրունքներուն դաշնընթաց
Ու կը մաղթեմ մըտերիմ
Սըրտակցութիւնն մեր կենաց . . .

26-3-38

141

Կրտսերագոյն Սիրուհւոյս

Մեր տարիքներն բաղդատութեան չե՞ն դրուիր,
Խորխորատ մը մեզ կը բաժնէ՛ իրարմէ . . .
Ինք այգագե՛ղ Պատանութիւն լուսածի՛ր . . .
Մինչ ես, տըրոո՛ւմ, աշնանահար միջօրէ՛ . . .

Սակայն կամա՞ւ, ան կը խառնէ իր դեղձան,
Դանգո՞ւր ծամերն, իմիններուս ըսպիտակ . . .
Երբ մերձենայ պահն համբոյրին սերմնացան,
Անվերապահ նուիրումո՞վ, խօլարձա՞կ . . .

30-3-38

142

Երբ ըսկըսի բողբոջի՛ւ
Սիրոյ ծաղիկն Հոգւոյն մէջ...
Նոր փա՛յլ կ'առնեն աչերն իր,
Քայլերն ալ նո՞ր ելեւէջ...

Քանի աճի՛ Բոյրն անոր,
Կը խորանայ անձկագին
Ու օր մըն ալ կամաւոր
Կ'ընծայէ՛ սիրտն ու մարմին...

143

Անտառներուն ու վարդերո՛ւն
Մունջ յայտնութեանց դիմեմ իսկոյն
Գըժտեր եմ յոյժ, գաճաճն եմ հին,
Գըոփհներուն մէջ սողոսկո՛ւն...

Անձըս մըսէ, խե՛ղճ կարկուրայ
Արտաքսուած երկրիս վըրայ...
Եսըս ծառայ իր ծըփանքի՛ն
Անուրջներո՛վ կ'անօսրանա՛յ...

144

Պ. ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍԱՄԵԱՆԻՑ

Այս պարտադիր հեւքին թոյնէն
 Տարտամ նըշմար, կատարն Անհաս...
 Խոհ ու դատում, կարկամ ծուէն
 Անմարդասէր զաւեշտի մաս...

Սիրեցէք զիս, սիրեմ ըզձեզ,
 Սիրով պարզենք այս բուճ աշխարհ
 Գեղեցկութիւն եւ գեղարուեստ
 Բլլան օրօ՛ր մեզի ցըմահ...

22-5-38

145

Վիշտ չըտեսած հոգիիդ մէջ ծիծաղկո՛տ,
 Օթեւա՛ն մը վերապահէ ինձ համար,
 Ամէն անդամ որ տուայտիմ մահահո՛տ
 Իշեւանիմ ջինջ լոյսերո՛ւդ կենարար...

Ու դուն բարի, զիս ընդունիս անվըրդով
 Պալասանե՛ն վէրքերս, խոհուն գգուանքով
 Մինչեւ որ ես ապաքինած վերըստին
 Նոր աւիշով նետուի՛մ կըրկէսը մարտին...

146

Այդ պատանի անըրջագե՞ղ
Սեւեռումին մէջն Հոգիիդ
Թաթիսե՞մ աըրտում անձըս սըրտնեղ
Ու մըկըրտուի՞մ նորափըթիթ...

Իւրաքանչիւր փորձառութիւն,
Նոր դառնութի՞ւն կուտակեց վրաս...
Ողջո՞յն, ողջո՞յն Պատանութիւն
Իմ երբեմնի վըճի՞տ Երա՞զ...

147

Աղուոր բառեր փաղաքշական
Մինչեւ լեզուին ծայրը կուգան,
Չ'արտասաներ՝ բայց հեշտօրէ՞ն
Ես իմաստնին կը կըռահե՞մ...

Աւելի՞ լաւ... լեզուն բընա՛ւ
Չըխաթարէ Մէրն իր անբա՛ւ...
Ու մի՞միայն աչերն իրեն
Ցըստակօրէ՞ն յայտարարեն...

148

Ես՝ տարէ՛ց միս ու ոսկոր,
Կորդ այտերով կնճռամա՛ծ,
Դուն՝ նորակերտ մէկ սափո՛ր,
Սիրակութքի՛ պատրաստուա՛ծ...

Իրարու մօտ, դէմ – դիմա՛ց
Բայց իրարմէ ի՞նչ հեռու...
Նո՞յնիսկ զինքը դիտելու
Կը վարանի՞մ շրփոթա՛ծ...

149

Անյա՛գ երա՛զ, յոգնած մարմին,
Իրարու հետ չե՛ն հաշտուիք,
Մին կը վարդէ՛ իր Ցընորքին,
Մինչ կը սանձէ միւսը թափն իր...

Այն ատեն ո՛վ իմաստութիւն
Յորդորէ՛ զիս, համոզէ՛ զիս...
Թէ աեւելն է յիմարութի՛ւն
Ու ես պարտիմ վե՛րջ տալ կեանքիս...

148

Ես՝ տարէ՛ց միս ու ոսկոր,
Կորդ այտերով կնճռամա՛ծ,
Դուն՝ նորակերտ մէկ սափո՛ր,
Միրակութքի՛ պատրաստուա՛ծ...

Իրարու մօտ, դէմ – դիմա՛ց
Բայց իրարմէ ի՞նչ հեռու...
Նո՛յնիսկ զինքը դիտելու
Կը վարանի՛մ շրփոթա՛ծ...

149

Անյա՛դ երա՛զ, յոգնած մարմին,
Իրարու հետ չե՛ն հաշտուիք,
Մին կը վարդէ՛ իր ծընորքին,
Մինչ կը սանձէ միւսը թափն իր...

Այն ատեն ո՛վ իմաստութիւն
Յորդորէ՛ զիս, համոզէ՛ զիս...
Թէ աեւելն է յիմարութի՛ւն
Ու ես պարտիմ վե՛րջ տալ կեանքիս...

150

Կը թուէի՛ք անմատչելի,
Մինչ անարժէք մարդիկ սակայն,
Շըլացուցիչ մէկ հայելի
Զեռքերնուն մէջ ձեզ ունեցա՞ն...

Հսթափեցա՛յ խե՛ղճ պատրանքէս
Դառնակըսկիծ... զի պարիսպն այն՝
Որ կը բաժնէր իրարմէ մեզ,
Կառուցեր էր Եսը՛ս միայն...

29-7-38

151

Եթէ զիս տա՛մ, ամբողջովին պէտք է տա՛մ...
Առաջ Հոգիս պէտք է սիրէ՛, որոշէ՛
Որ մերձենալ փորձեմ Քեզի վընռակամ,
Նախաղասե՛լ թաքուն խօսքեր հաշիշէ...'

Վարանումի երկվայրկեան մ'իսկ չունենա՛մ,
Ուղի՛ղ դիմեմ շողախուրձին աչերուդ...
Որ ո՛չ ալ գուն թերամըտիս ի տարտա՛մ
Միահեղոյն ողջագուրե՛նք նոյն Խորհուրդ...

30-7-38

Մին ընծայե՞ց, մանեակ մը կեղծ,
Մի ոմն մետաղ ապարանջան,
Երբորդն պարի հրաւիրե՞ց,
Չորրորդն աժան մի ճաշարան...

Յաճախ նոյնիսկ սուրճի փոխան
Կամ բաժա՞կ մը գարեջուրի...
Պանդոկ մըտան սաղուռնական
Անուս որդոց հետ թեւ - թեւի...

Սիրեցի՛ ես, մի՛շտ սիրեցի՛...
Հին հոգերըս մոռնալու տեղ,
Նորե՛ր, խորե՛ր ըստեղծեցի...
Սիրալս դարձաւ հընո՞ց մ'ահեղ...

Սէրերըս զիս լափլիզեցի՛ն...
Վա՛ռ կեանքի մը կարօտին մէջ,
Մարիսի մը պէս բըռընկցուցի՛ն
Ու դեռ կ'երգէ՛ Բոցն իր անշէ՛ջ...

154

Մին կատակով կը մօտենայ,
Ուրիշ մ' ըզգաստ բառերով,
Նայած ինչպէ՞ս, տեղի կուտայ
Կոյսն անծանօթ հոդեթո՞վ...

Էն դժուարինն այդ առաջին
Մուտքն է սըրտին դըռնակէն...
Ապա ինքնի՞ն իսկ կը բացուի՞ն
Մարմնոյն դահլիճներն ամէ՞ն...

31-8-38

155

Մէկըզմէկու հանք անծանօթ հեշտանքի,
Պիտի զիրա՞ր ըմբռշխնեն արդ մոլեգի՞ն...
Ամօթն անգայտ առասպելական ոգի',
Խո՞յս է տուեր, աղբիւրներէն վայելքին...

Սիրաբուքի ըմբշամարտն է հոլանի'...
Լո՞յս մարմիններ կայտառ իրա՞ր կը փարին...
Կը պըրկուի՞ն ու կը ձուլուի՞ն բորբ ի մի...
Շըռայլելով երանութի՞ւն երկրային...

1-9-38

156

Ինծի ծանօթ գովասանքի բառերէս
Եւ ո՞չ մէկը պիտի կը ընամ գործփծել...
Անոնք այնքա՞ն իմաստէ զուրկ են կարծես,
Փառքիդ փոշի՞ն անգամ կարող չե՞ն հեծել...

Դողդողանքի՞ս, թոթովագին սա լեզուիս,
Դո՞ւն ակամայ շարժառիթն ես անգիտա՛կ,
Եւ հեզօրէ՞ն կը շըփոթես ա՛յնքան զիս
Որ հաստատես իսկութիւնը անպարփա՛կ...

157

Մոլեգնո՞ղ պիծակ, տըխո՞ւր, արարած,
Կիրքերու ցանցին մէջ դարանակալ...
Արեան մըտրակով միշտ առաջ քըշուած,
Խօսո՞ւն անասուն, երկրային, վիժեալ...

Գերադասութեան տենչերով մըռա՛յլ,
Բուծանէ զնմանն որպէ՞ս երամակ...
Բընազդով ագահ, նըպատակ յետնեալ,
Անձնուէր միա՞յն, Եսի՞ն խորամանկ...

158

Կոպերըս խո՛ւսի, մինչ միտս արթուն մի՛նչեւ այդ,
Սեւեռումով Արարչութեան հետ հաղորդ,
Ես բաղձացի կուռ հաւատքով մ'անյողղողդ
Որ ինձ համար գործուէր բացէն մի Հըրաշք

Ու լըսելի եղաւ աղօթքս առ Աստուած
Ինձ տրուեցա՛ւ, ինչ որ սըրտանց խընդրեցի...
Եւ արդ անգի՛ր ծածուկ դաշինք մը Յոյսի
Զօդե՛ր է պիրկ, Արարիչն ու Արարած...

159

Անպարագի՛ծ համաստեղաց
Ոլորտին մէջ թաւալգըլո՛ր,
— Նորեկ բընիկ — մարդն արարած
Խորախորհուրդ ու տեսլաւո՛ր...

Երկնից միջեւ երկի՛նք մ'ալ ինք
— Գաղափարաց փեթա՛կ մը նոր —
Սիրտն իր բա՛ց վարդ, Լոյսին դալիք
Կը թաւալէ՛ օրերն աղուոր...

160

Ինքն իր Զեւին, շընորհներուն անտեղեակ,
Պըտուղի մը նըման հասո՞ւն ու համե՞զ,
Կ'այլասերի ու կը թըթուի՛ միայնակ,
Քանի՛ չիգար ձեռքը Սիրոյն զինք քաղե՛լ...

Շատե՛ր այսպէս կ'անտեսուին ու կը փըտտի՛ն,
Իրենց բունին մօտ կը թաղուի՛ն կոյր բաղդէն,
Կամ թէ որդե՛ր կուգան զանոնք կը լակե՛ն,
Իրենց արծաթ չողիկներու ոստայնին...

161

Ես արեւին, արեւն իմ դէմ
Կ'ողջագուրուի՛նք գուրգուրանքին...
Յօղ քըրտինքներս ձօնած իրեն,
Զորս երազի՛ վերածէ ինք...

Այսպէս կ'անցնինք կենաց ճամբան,
Ես տըքնաջան, ինք վարձատո՞ւր,
Մինչեւ հասնինք շիրմանատան,
Օթեակներուն խաղաղոսիի՛ւռ...

Մայր ըլլալու արժանի,
Մարմին մ'ունի յաղթապահնձ...
Հասակ պարթեւ պարմանի,
Մրունք ամրաշէն գեղազանց...

Պիտ' չըցամքին ծիծերն իր
Թէ դիեցնեն տարիներ...
Հոյլ - հոյլ մանչեր հատընտիր,
Արամազդներ գանգրահեր...

Միրգի մը պէս զոր կըրնաս
Ճաշակե՛լ երբ սիրտդ ուզէ...
Կամ աղօթե՛լ յոտընկայս,
Մարմանդին վրայ սընդուսէ...

Կը փափաքիմ որ այդպէս
Ճի՛շդ կարօտած վայրկեանիս,
Գըրկե՛մ մահը սըրտակէ՛զ
Երբեմն ինչպէս սիրուհիս...

164

Յանուած հունտեր ակամայ
Ծըլեր ենք ու կը սնանինք...
Որպէս լարուած մեքենայ
Օր մ'ալ մաշած կը կասինք...

Բնադրին պարը կը դառնա՞յ
Այսպէս հօրմէն առ որդին...
Մեղք չըբարձե՞ն մեր վըրայ,
Մենք զոհերն ենք Զաւեշտին...

30-1-39

165

Քանի՛ օրուան կեանք ունիս,
Ո՛վ թիթեռնիկ սիրասուն...
Կ'արժէ՞՞ որ ա՛յսքան պըչըիս,
Բեհեզներով ասմազուն...

— Ես պըճնասէր չե՛մ, երբեք,
Բնութիւնն այսպէ՞ս հագուեցուց...
Կեանքս եթերին մէջ պարե՛րգ
Երազանքի ուղեցո՞յց...

166

Խլէ՛ զիս խոկում, տա՞ր սանձարձակ,
Փախցո՛ւր դէպի Նոր-Արեւծագ,
Խորհըրդաճեմ Հրապոյրներուն
Քնարերգութեան հասցո՞ւր շիտա'կ...

Այս երկրիս վրայ, նիւթն անդադար,
Կը հալածէ երգիչն արդար...
Արբեցո՞ւր զիս, բարձանց Հրայրքով,
Որ չիմանամ վիշտերուս լար...

167

Ո՞վ Գոյութի՛ւն... քու գիտութեան
Մանկապարտէզն ենք մենք դեռ...
Ու քերական - այբբենարան
Մ'իսկ չունեցանք ցարդ առ ձեռն...

Ժամանակնիս կարճ է աւա՛ղ,
Կեանքի պայքարն ալ հատու...
Միջոց չունինք լիախաղաղ
Քեզ ուսնելո՞ւ, սերտելո՞ւ...

168

Ինք վըզէս կախ սիրատո՞ք,
Մինչ իրանին ես փարա՛ծ՝ ...
Զերդ քառաթե՛ւ բորբ Ցընորք
Արձակուա՛ծ գողն աստեղաց ...

Անհունին մէջ նո՞ր Ոլորտ ...
— Ըզգայնակա՛ն Միդամա՛ծ ... —
Բընազդավա՞ռ Առաւօտ,
Երկունքի վէ՛ժ խորընթա՛ց ...

13 - 2 - 39

169

Լուսասփի՛ւռ պարտէզ, Անհունին դիմաց ...
Ծաղկա՛ծ մըրգառատ, Երկրային դըրա՛խտ ...
Մարդիկ պատահմամբ, այնտեղ հրաւիրուած,
Կը տօնեն կեանքի Հրապոյրն արփազա՛րդ ...

Մա՛հն ալ մեզ ձօնուած անոր չափ համե՛զ,
Երբ յոգնած ենք ալ, յըզիմա՛ծ Վայելքէն,
Կը ցանկանք սըրտա՛նց վերադարձը մեր,
Մայր - Անէութեան գութի՛ն ապաւէն ...

170

Մանրանըկար փոքրիկ դէմք մը սիրական,
Նուրբ ծիրերով, ժըպիտներով յօրինուած՝
Ուր կը ծագի Մաքրութիւնը մըտածման,
Նըման աստղին առաւօտեան փայլարձա՛րծ ...

Անմեղութեան փապարներէն կաթկըթած,
Պուտ մը շողակ — ակնախըտիղ ծիածան —
Կակաչի մը կոկոնին պէս նորաբա՞ց
Երփնակիտուած կենդանագի՛ր մանկական ...

15 - 2 - 39

171

Նուազարա՛ն բանիմաց ...
Հոգեմըշա՛կ դըրութիւն՝ ...
Որուն նոյնիսկ չըհըպած,
Կ'երգեն լարերն ըզգայուն ...

Թելադրութիւնն աչերուս
Բաւական է որ յուզեն,
Իր նայուածքին երգը կոյս
Ցընցեն մարմինն համօրէ՛ն ...

19-2-39

Ճոխ զարդերէդ, շըպարներէդ
 Մարմինդ համակ մերկացո՛ւր...
 Աւելի՛ լոյս, աւելի՛ վէտ,
 Աւելի՛ գեղ բաշխեցո՛ւր...

Յետոյ եկո՛ւր նըստիր ինձ հետ,
 Կապերտն ըրած առաթուր...
 Ծունկ ծունկի վրայ յորդած զիստերդ
 Քըմայքներո՛վ արժեցո՛ւր...

Անապատի բոպիկ Փէլլահ,
 Պարիկներու քաղաքն ինկած
 Սիրատոչոր բայց գաղտնապահ,
 Կը մորմոքիս լո՛ւր, աննըշմար...

Քայլերըդ կոշտ, դէմքըդ խաւար,
 Ո՛չ մէկ ժըպիտ կ'իյնայ վըրադ,
 Այս ծարաւին դուն չես տոկար,
 Թէեւ խարկուած զըրկանաց մարդ...

174

Մոլորեալ մոլորակ
Խորհըրդոց Եթերին...
Կը նաւե՛ս հերաղձակ
Մենամոլ ու լըռի՛ն...

Օրերուգ նըկարէն
Իմաստներ կը ծընի՛ն...
Կ'երեւին ասպօրէ՛ն
Կ'անհետի՛ն տըրտմագին...

175

Ամենուն պէս նոյն շաղախէն էր ինքն ալ,
Պատանութի՛ւն, քընարական բընութիւն,
Կեանքին համար բո՛յր մեծարող ծաղկասայլ,
Անըրջանքին ոլորտներովն ապարդի՛ւն...

Երբոր փորձեմ քանդակել Ծի՛րն անդրաբուեստ.
Անշունչ նիւթէն Անծի՛րն իրեն արձակե՛լ...
Կարենայի Զինքն այս անդամ ջոկել գէթ
Իմաստներէն եւ ընծայե՛լ անարգել...

Սենեկալցին ու Սիտին
Ինկա՛ն վըրադ լըլկեցի՛ն...
Բայց մընացիր անբասիր,
Զի Լոյսն ոճրէն չ'աղարտիր...

Անմեղունակ ջինջ Հոգին
Հետք չըպահեց իր ետին...
Ու աստղի պէս ոսկեծի՛ր
Դուն մեղ կըրկի՛ն շողացի՛ր...

Մինչ ծամերուս ձիւնին հետ,
Կարօտներըս սաստկացա՛ն...
Խոպովներուն արփաւէտ
Բոյրերն եղան ցիրուցա՛ն...

Ու աչերուս բոցին հետ
Նուաղեցան մինչ Սէրե՛ր...
Սիրուս դարձաւ տաղ մ' անպէտ,
Անըրջահե՛ւ յուսերե՛ր...

178

Մըտածումիդ լոյսին առջեւ ես արբշի՛ո,
Երբեմն ինչպէս Գեղեցկութեան տիպարին...
Կը նուիրե՛մ Հոգւոյս սէրերն անխըտի՛ր,
Քու մարդասէ՛ր պեղումներուդ նըժարին...

Իմացակա՞ն ճըրագներով տօնազա՞րդ...
Զոհողութեան խաչերու լուծն ուսընդբարձ...
Մեզ ձօնելո՞ւ համար խուրձ մը ճառագայթ,
Համեստօրէ՞ն Աստուածացա՞ր չըմեռած...

23-3-39

179

Հոգեկան պալա՛տ կառուցի Քեզի...
Ըզքեզ դիցուհի՛ ըրի պաշտումիս...
Ամէնէ՛ն խորունկ Քեզմո՛վ վասընզի
Գընահատուեցայ չըքնա՞ղ Սիրուհիս...

Նիւթական կեանքին խարիսխումներէն,
Չըխըրտչեցար Դուն եւ ո՛չ մէկ վայրկեան...
Այլ քի՛չ մ' աւելի սիրազեղօրէ՞ն
Փարեցա՞ր ինծի, սուրբի՛ մը նըման...

13-4-39

180

Զե՛ւ վըրընջիւնով, ճախրանքվ հըզօր,
 (Միջոցէն վարդող նըժոյդին նըման,)
 Բաշարձա՛կ, ահե՛ղ, աչերով բոսոր՝
 Խունգերն հեռաւո՞ր տենչերով թրթուա՛ն,

Յաղթանակներու վրատա՛հ ամազօն
 Բերկրութեան տօնին միւռօնովն օծո՞ւն...
 Կամքըս կը սուրա՛յ դէպի՛ հորիզոն,
 Դափնեվարդերու բոցի՞ն շառագոյն...

181

ՍԻՐԱՆ ԶԱՐԻՖԵԱՆԻՆ

Անվերադա՛րձ անկիւնադարձն Հրաւէրիս,
 Անտառներէն, գացի՛ր պատգամ խընդրեցի՛ր,
 Վարանեցա՞ր... Երկրիս վրայ կոչուիլ կինս,
 Խոնարհ կեանքըս ցըմահ բաժնել անձանձի՛ր:

Երկոտասան ամեր պանդո՞ւստ են արդէ՞ն...
 Մըսխումներու վըրփուրներէն յազեցանք...
 Մուրացինք երդ ու մոռացում Աշխարհէն,
 Բայց մեզ հասաւ լոկ Հին կոչին արձագանգ...

1939

Կրեայի՛ պէս սակաւակեաց,
Խոտո՛վ, ջուրո՛վ սընանելո՛վ,
Դո՛ւն միշտ կ'ապրիս հետը մարդկանց,
Անոնց բախտին սիրագորո՛վ...

Զոհաբերման մըշա՛կ անվարձ...
Կորաքամակ ու գըլխիկոր,
Արդարութեամբ պատըշգամուա՛ծ
Խանդե՛ր ունիս դեռ նորանո՛ր...

Ուղեղիս մէջ տենդայո՛յզ,
Տըղմուտ իղձեր բազմերանդ,
Կը թըռչըտի՛ն, կը խըժա՛ն
Ոլո՛րտներով անորոշ...

Երազներու, հոգերու,
Տարօրինակ խառնարա՛ն...
Փեթա՛կ ամուլ խուռներամ՝
Ուր կը պակսի հարս - մեղուն...

184

Սպառեցիր պարտէզիդ
Ծաղիկներն հիր, ձօնելով...
Կոկոն, տերեւ, ճիւղ ու ծիլ
Հատցուցիր փունջ կապելով...

Ան արդ անբօ՛յը է ու լերկ,
Գարունն անցաւ իր համար...
Սակայն բուներն հողէն գե՛ռ,
Սնունդ կըստանան անդադար...

22-5-39

185

Երկնակապոյտ ելուսեն ուռա՛ծ
Առագաստ մը որպէս հովէն,
Կը խիզախէ՛ ամէն նայուածք՝
Որ կ'արձակուի Սիրոյ պարսէն...

Առողջ կեանքի սահա՛նք հեշտին՝
Որ բաշերով կը թաւալի՛...
Փըրփուրներէն ցայտող փոշին,
Կ'ըլլայ օղի՛ ու գոլորշի՛...

186

Սէ՛ր... անունովդ ի՞նչ որ ըրի կամ ըսի,
 Պըղպըջակն էր, լոկ Զերմուկին հանքային,
 Ապացոյցը կեղբոնական յորձանքին՝
 Որուն հազիւ տուի հեւք մը Երաղի...

Էռւթեանըս խորը թաքուն Լուրթ Եթեր,
 Բիւր աչերով Յաւէրժահարս անանուն...
 Ի՞նչպէս կոչեմ, անուանեմ Զինք չեմ գիտեր,
 Իր խորհուրդէն ահա Սիրտ մը կարկառուն...

187

Սըրտիս բերդին հարս տանիլ Քեզ ուզեցի...
 — Գըոփհներէն դեռ չաղարտած նունուֆա՛ր —
 Ու ճանչցընել անոր Գաղտնիքը քեզի
 Համախորհուրդ ճամբորդութեան մը համար:

Ինձ պակսեցան միջոցները նիւթական
 Հարըստութիւն — արի՛ւն կենաց քաղքենի —
 Իղձըս մընաց զուտ ծըրագիր հոգեկան,
 Ընդվըզումի բոց տենչերով ամեհի՛...

Գեղեցիկ կեա՞նք, լինելութեանդ չեմ գաւեր,
Այլ մըտահոգ անոր վըսեմ կոչումին,
Կ'ուզեմ մաքրե՛լ պայքարիս մէջ փուճ ցախեր՝
Որ կը խեղդեն շըքեղ անումն իր լըրի՞ն...

Կ'ուզեմ որ դուն ծաղկիս առո՞յգ հոգեթո՞վ,
Աւելի՛ պերճ ու յանկուցիչ ու արդա՞ր...
Ըլլաս Հանդէս Բազմարուեստեան Ճախրանքով,
Միջազգային Երջանկութեան Լուսադա՞ր...

Իր շրթներուն պատանեվա՛ռ բաժակէն
Խո՞ր ըմպեցի ամբո՞ղջովին իր Հոգին...
Մարմըրեցա՞ն աչերն իրեն հեշտագին,
Իմ անյագո՞ւրդ պապակիս դէմ բոցեղէ՞ն...

Մատուցուեցա՞ւ Ան լիովին իբրեւ Լո՞յս
Որ ես քամե՞մ Նուիրումին չողն յետին...
Որպէսզի ինքն, ալ նըշմարէ՛ տեսլագին,
Վարձատրութեան մըրցանակն իր Արշալոյս...

190

Գա՞նկըդ պատռես, ճա՞ր չըկայ,
Վիճակնիս մեր շատ պարզ է,
Եթէ կուզես դեռ տոկա՛լ,
Արջի մորթով փաթաթուէ՛...

Լա՞ց, աղերսա՞նք, անօդուտ,
Կուլ պիտի տաս ամէն բան...
Ծուռ ըլլայ եւ կամ թէ սուտ,
Պիտի քալե՛ս քու ձամբան...

30-6-39

191

Ծիծղո՛ւն աղջկայ համբոյլին
Կարօտը զիս կը խարկէ՛...
Կը խանձի՛մ ես անձկագի՛ն,
Մի աննըշմա՛ր խարոյկէ՛...

Ինձ զովանալ հընա՞ր չէ,
Ա՛լ այտերէ պաղպաչո՛ւն...
Ու ծիծերէ նաբընջէ՛,
Կերտե՛լ երկի՛նք մը փըլչուն...

1-7-39

192

Պըրօնզաձո՞յլ մարզական, երկու էակ
մըրժազա՞նց,
Պըսակաւո՞ր գիտութեանց ու Արուեստից
աբեղայ,
Մեր երկրային Դըրախտին բարիքներով
պեղճացա՞ծ
Նո՞ր օրերու գեղակե՞րտ տիպար Աղամ եւ
Եւա...

Այրն ափերուն մէջ ճըմլա՞ծ գեղձերն ողկո՞յզ
ծիծերուն...
Անոնց հոյզէն կազային աչերն ու սիրտն
ամպամա՞ծ...
Կը յանդըգնի՛ ընդքաղել բոլոր շիթերն
արնագո՞յն,
Հեշտութեան բի՞ւր վարդերուն բուրումներովն
ըզգըլիսա՞ծ...

193

Ո՞վ հըպարտ յիմար,
Դուն զո՞ւր կը սոնզաս...
Կեանքէդ դէպի Մահ
Անցքըդ է շա՞տ պարզ...

Մատնաչափ մը լոկ
Ու յանկարծ չըկա՞ս...
Յո՞ երթաս անհո՞գ,
Եղի՛ր միշտ պատրա՞ստ...

9 Սեպտ. 1939

194

Բոյրով՝ տեսքով ձուաղեղ...
 Չըճաշակուած կարկանդակ...
 Որ դիմացէն բերանին
 Գեղձերը կը խըտխըտէ...
 ...

Կամ յոյզերու կոյս — հեղեղ,
 — Զեղանակուած նոր նուագ՝ —
 Որ չէ տուած առաջին
 Ունկընդըռութիւն մը գուցէ...
 ...

195

Քու յետսագոյն աղօթարան այսահա՛ր
 Սեւե՛ռումով մատուցուած Քե՛զ զերդ խորան,
 Իր հոգիին լրուութեանը մէջ պայծա՛ռ,
 Կը դիմէ քու Նախաստեղծիչ Զօրութեա՛ն...
 ...

Դուն՝ որ էիր, պիտի ըլլա՛ս, ե՛ս այսօր...
 Ունայնութիւն չե՛ս այլ խորո՛ւնկ մէկ իմաստ,
 Որուն տըկար բըջիջներըս մըտաւոր,
 Աղօտօրէ՛ն կը նըշմարեն Լոյս Անհաս...
 ...

196

Ընթերցումէն Քերթուածիս,
Թաքուն Սիրոյս տիրացա՛ծ,
Երբոր ուզես գըտնել Զիս,
Գըրկել անձը՛ս թեւարա՛ց...

Գիտցի՛ր կանխաւ սիրելիս,
Երիտասարդ չեմ ես ա՛լ...
Ու որպէսզի չընկըրկի՛ս,
Աւելի՛ լաւ է չըգա՛լ...

197

Մատակարա՛ր ազնուասերմ
Խըրախճանա՛ց վարդերու...
Ո՛վ ցանկալի շափրակնե՛ր,
Տառապանքի ու Սիրո՛յ...

Երկունքներու չեփորման
Նախահրապո՛յր Մեղեդի...
Մո՛ւթ չողերու Շատրուան,
Այդատօնի մը յուռթի՛...

198

Այդ Դէմքիդ վրայ մանկագեղ,
Ժըպիտը ա'սող մ' է փայլուն՝
Որուն աննի'ւթ շողերուն
Դէմ կը խայտա՛յ սիրուս նեղ...

Մայիսեան Վա՛րդ նորաբաց,
Այգուն ճակտին լուսայեղց՝...
Որուն դիմաց վըշտագե՛րծ
Կ'անէանա՛մ անձնուրա՛ց...

199

Այս հեւ ի հե՛ւ վազքին մէջ
Ամէնօրեայ պայքարին,
Քաղն համըոյրին անհրաժեշտ
Շիճուկ - արիւնն է սըրտի՛ն...

Իցի՛ւ Անձըդ կարենար,
Տա՛լ ինձ Նեկտարն այդ չըքնա՞զ,
Որ կըրէի տիրաբա՛ր,
Կեանքիս խաչը մինչե՛ւ Մահ...

200

Մատա՛կ մարմին այգանոյշ
 Հրապոյըներով ակաղձո՞ւն
 Իրան, բումբեր, կուրծք ու թուշ
 Հեշտանքներո՞վ լըպըրծուն...

Սերմնացանքի պարա՛րտ հող,
 Աւիշներով խըլլըրտո՞ւն...
 Մըշակները հաւաստող
 Թաքուն Գա՞նձ ու Բերկըրութի՞ւն...

16 Սեպտ. 1939

201

Իմ սիրածներն ինձ չեն գար,
 Ինձ դիմողն ես չեմ հաւնիր...
 Յաւէրժախանձ Մորմոք վա՛ռ,
 Աքսորեալ սի՛րտ տարագիր...

Եթէ նոյնի՞սկ ոմանք գան,
 Կը մեկնի՞ն... չեն մըշտական...
 Իսկ թէ մընան ես կ'երթամ
 Նոր Հարսնութեան մը փարթա՛մ...

18 Սեպտ. 1939

202

Ո՛չ տուն մ' ունեցայ սիրած գիւղիս մէջ,
 Ո՛չ ալ արտավար մը հող սեփական...
 Դժուար վաստակըս, հազի՞ւ ինձ բաւեց,
 Սընուցանելու երկու սիրական...

Հայկակն ու Կարօն, բողբոջնե՛ր Սիրոյ,
 Եա՛տ վատնեցին զիս ու դեռ կըսպառե՞ն...
 Բայց ես հըպա՛րտ եմ, անոնց կեանքէն գոհ,
 Զերդ Արուեստագէտն արտադրած երկէն...

24 Սեպտ. 1939

203

Թէ պատահի որ հանդիպինք օր մ' հեռո՛ւ
 Անգաղտնապահ ազգականէ, ծանօթէ՛...
 Պիտի ըսե՞նք ինչ որ կըզգանք իրարո՛ւ,
 Պիտի տրուի՞նք մէկըզմէկու եւ կամ թէ,

Հի՞ն օրերու սիրահարներ գըժտուա՛ծ,
 Իւրաքանչիւրս ամուսնացած զաւկի տէր...
 Հըպարտօրէ՛ն մեր դիրքերուն կըոթընա՛ծ,
 Պիտի լըռե՞նք... ու ձեւանանք անտարբե՛ր...

26 Սեպտ. 1939

204

Ամէն մէկ օրն որ կ'անցնի
Իբրեւ Նեկտար՝ հընամեա՛յ,
Մեր Խընդութեան կ'ընծայուի՛
Արեւ թասով լըսնոսկեա՛յ...

Ով որ ըմպէ երանի՛...
Կը բազմանա՛յ, կ'անհուննա՛յ...
Մահկանացուն կ'անմահի՛
— (Խորհըրդալիւղ փոսուռայ) — ...

27 Սեպտ. 1939

205

Առաքելութի՞ւն թէ ձի՛գ Ազնուակա՛ն,
Պարտադիր Բընա՞զդ, թէ Խա՞նդ կամաւո՞ր,
Հսպունդ հացի պէս, քիչ մը ամէ՛ն օր
Կե՛ր ըրի կեանքըս մեր Ընկերութեան...

Սպառո՞ւմ էր ինձ, հատած առ հատած...
Լուսեղէ՛ն վըշրանք, անտեսուած յաճախ...
Շատե՛ր կըշտացան, մեկնեցան ուրա՞խ,
Գոհունակութիւնս ինձ լոկ վա՛րձք մընաց...

4-10-39

206

Կ'ուզե՛ս ցատկէ՛, կ'ուզես պարէ՛,
Նո՛յնն է վճիռն Աշխարհին,
Ինչպէ՛ս կ'ուզես անանկ ըրէ՛
Ու մի՛ զըղջար վախճանին...

Խըղձմըտանքըդ կանթեղ ըլլայ,
Անոր լոգսով ճամբորդէ՛,
Ան իմաստն է Մահուան վըրայ՝
Որ Արուեստըդ կը վարէ...

207

Փոխանակութիւն երգո՛ղ բառերու...
Առաջին առիթ հաղորդակցակա՞շն...
Լո՛ւռ մաղթանքներու դա՛շտ մագնիսական...
Ո՛վ երանելի երկվայրկեաններ սուզ...

Պարկէ՛շտ ակամայ... չուզեցի չեղի՛լ,
Շըրջե՛լ անաւարտ նիւթն խօսակցութեան...
Փոխն ի փոխ անպէ՛տ հարցում պատասխան
Ու ցըտեսութի՛ւն մ' ապա գըլխագիր...

208

Մէկ ոտքով Երկրին, միւսով Անդենին,
— Հարախաղացնե՛ր Կեանքի ու Մահուան —
Տիեզերական մեծ Խաչին վըրան,
Աչք մըն ենք բացուող ու գոցուող մութին...

Գործարանաւոր կամ տարերային,
Իմաստաւորէն անգիտակցական.....
Բըռներ ենք Ուղին Յաւիտենութեան,
Մէքենականէն Աստուածայինին...

30-11-39

209

Այս մարմինիս տարագէն
Դեռ չըտարբաղադրուած,
Անմա՛հ Երազ մը կորպել
Պիտ՝ ուղէի Տէ՛ր - Աստուած...

Օրերն ափսո՛ս կը չուե՛ն
Սողունաքայլ ու մըռա՛յլ...
Ու չեմ կըրնար տարրերէն,
Չըտե՛լ Ոգին անդրափա՛յլ...

210

Ալիքը Սիրոյն կը մակընթանա՛յ
Սըրտիս դաղտակուր ափերուն վըրայ,
Զեւերէն տիպար յանդ կը յօրինուի՛...
Նոյն յորդորակն է — Խոլա՛նք Վայելքի ... —

Հոգւոյս ամայի հովիտներուն մէջ,
Նո՛յն ծործորումն է զուլա՛լ արիւնի...
Յաւիտենական Սիրե՛րդ վըշտահեծ,
Անթի՛ւ, անըսպա՛ռ ակերով դաղտնի՛...

211

Միա՛յն եւ միա՛յն համբոյրի համար...
Գիշեր մը ծածուկ ժամաղըրավայր՝
Ուր ի՛նչ սըրտմաշուկ յոյզեր, փըսփըսո՛ւք...
Կարելի սիրոյ Աշխարհ մը պայծառ...

Հաւանութիւն մը շրթներով կընքուած
Եւ ապա ոչի՛նչ, այլ Երդ ու Քերթուած,
Ընդարձակ կալուածն իր մըտածումին,
Բողբոջուն Պարտէ՛ղ աչերուս դիմաց...

212

Դարերուն հետ նորափոփոխ
իր աճիւնէն յառնող փիւնիկ,
Անմահութեան ոգին զարթնող
Գեղեցկութիւն կուսածաղիկ...

Տարտարոսը ծաղկեցընող
Մողական կունկ, Աչք ու Ողջո՞յն...
Երակներու մէջ Դող ու Շող
Ցարուցանող Շիճուկ - Արիւն...

213

Սա հողեղէն աչերուս
Լո՞յս տո՞ւր Լուսո՞յ Արարիչ,
Եթէ կ'ուզես որ ապրիմ,
Փառքիդ համար զերդ երգի՞չ...

Թէ ոչ Նի՞նջ տուր տեւակա՞ն,
Վերածէ՛ զիս տարրերու...
Լուծէ՛ կեանքն այս խոհական,
Փըշը՛ արարածն այս Քու...

214

Տուր այդ կրծքէդ ինձ ըմպել,
Հեշտանքն անմար Բընազուին
Եւ ըզգըլիսի՛լ անարգել,
Մինչեւ բըջիջներս յետին...

Բազմապատկե՛լ խինդն հոգւոյս,
Հորիզոններ պաըուրե՛լ...

Ծագի՛լ չէնցող Արշալոյս,
Նոր խանդերով առաւե՛լ...

215

Գըրատախտակ մը սըրբուած
Երդի դասէն իը սիրակա՛ն,
Գանկըս դատարկ, քառս մըթին...

Կը յամառի՛ վերյիշել Զայն...

Կ'անցնի՛ն ժամեր, օրե՛ր կ'անցնին...

Կը յամենան նօթերն անդարձ
Ու բանալին եղանակին
Կը դալարուի՛ մուտքին կըդպած...

216

Խըմե՛նք սրտին սափորէն
Երազաջուրն հոտեւան
Ու թող խոհերն ամպանա՛ն
Դուլաներով տարօրէ՛ն...

Զի վաղն իբրեւ չոր տերեւ
Պիտի խլուինք հողմաթափ
Ու հողին տակ անարեւ
Էլլանք այլոց պարարտ աղբ...

217

Մէկ գիշերուան մէջ այնքա՛ն փրփրեցար
Ու վատնեցիր քեզ,
Որ յաջորդ առտուն դալուկ վարդ դարձար
Անմըմունջ ու հեզ...

Տուի՞ր ամէնքն ալ, ինչ որ կըրնայիր
— Դողե՛ր ու բոցե՛ր... —
Իր այսպէս հատած, պարտասած, անծի՛ր
Անըրջանա՛ս դեռ...



ՆԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Ստանալու համար հեղինակին եռհատոք բանաստեղ-
ծութիւնը, գիմել իր հասցէին՝

H. Tchoulfayan, 16, Av. J.-Jaurès, Paris - 19^e

Գրավանաներուն 33 % զեղջ. պայման՝ կանխիկ:
Յաջորդիւ կը հրատարակեմ մեր 4րդ հատորը՝
Ծիր եւ Անծիր, գրուած 1939 – 1942, Փարիզ:

Լոյս տեսած են նախապէս՝

ԱՐԲՈՒՆ ՄՐԻՆԳ եւ ԿԻԹԱՌ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Ստանալու համար հեղինակին եռհատոք բանաստեղծութիւնը, դիմել իր հասցեին՝

H. Tchouulfayan, 16, Av. J.-Jaurès, Paris - 19^e

Գրավանառներուն 33 % գեղջ. պայման՝ կանխիկ։
Ցաջորդիւ կը հրատարակենք մեր 4րդ հատորը՝
Շիբ Եհ Անծիբ, գրուած 1939 - 1942, Փարիզ։

Լոյս տեսած են նախապէս։

ԱՐՅՈՒՆ ՄՐԻՆԳ Եւ ԿԻԹԱՌ



ՀՀ Ազգային գրադարան



NL0358967

49366